



ԱՆԱԿԻՏ

ՀԱՆՐԻՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԲԵՏԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ—ՅՈՒՆԻՍ 1901

ԹԻԻ 6—7

ԲԱՐԷՉ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանուն բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յաւտեանական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Եմէ հոգին չձարգմաներ, չլուսաւորեր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մէկն բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՆԷ

ԳՈՅԺ ՄԸ

Անհուն զառով խմացանք, վերջին պահուն, զարհուրելի գժբազգութիւն մը որուն զոհ եղած է ծանօթ հայասէր Բրօֆ. Լէոն Մարիլետէ: — Իր կիներ եւ կնոջն ընտանքքէն 12 անդամներ ծովամահ եղած են առադաստանաւակով պտոյտի մը միջոցին. ինքն իսկ Պ. Մարիլետէ: հազիւ կրցած է ազատիլ. զիչեր մը ժայռի մը վրայ անցուցած է, հետեւեալ օրը իր օգնութեան կանչող ձայնը լսած եւ եկած են զինքը ազատել:

Ամբողջ հայ ժողովուրդը ամենախորին զառով պիտի իմանայ այս վիթխարի ազէաքը որ կը հարուածէ այնքան անկեղծ բարեկամ մը եւ այնքան հզօր պաշտպան մը մեր դատին:

ԱՆԱԾԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ս Յ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ — ՅՈՒԼԻՍ 1901

ԹԻԻ 6—7

ԳԷՄՔԵՐ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ

1893ին Պոլսոյ «Հայրենիք»ին մէջ հետեւեալը կը գրէի մեր եկեղեցական երգերուն մասին .

«... Ի՛նչ խոր շեշտ հաւատքի, ի՛նչ հզօր թոփշ կրօնական զգացման, ի՛նչ բարձր վերացում աստուածային խոկմանց, ի՛նչ ճշխութիւն վեհ մտածմանց, պերճ պատկերներու եւ վեհմ բացատրութեանց, եւ ի՛նչ լեզուի անբաղդասելի ներդաշնակութիւն՝ այդ երգերուն մէջ որ դեռ ա՛յնչափ երիտասարդ են դարաւոր կեանքէ մը յետոյ . եւ այդ ամենուն հետ, այն ի՛նչ անուշ, անբացատրելի կերպով անուշ երաժշտութիւն է որ նիւթին ու բառին համեմատ, երբեմն տրաւում, մեղամաղձութեան արցունքներով կը թաւալի, երբեմն զուարթ, վերին հրճուանքի լայն յորդումով մը կը ժայթքի, Ստուծոյ զգացմամբ առեցունք հողիին բոլոր սլացքներն ամենէն խորին արտայայտութեամբ թարգմանելով : Ի՛նչ դիւցազներգութիւն, ի՛նչ ընդարձակ եւ ամբողջական զիւցազներգութիւն է այն, զոր աստուածային մարտիրոսին վերջին շարաթէն ներշնչուելով, մաս առ մաս յօրինեց են մեր հայրապետները . ի՛նչպէս ամէն բան մէկ ազբիւրէ, լուսեղէն

ազբիւրէ մը կը բղխի հոն, եւ ի՛նչպէս ամէն ջան հրաշալի ներդաշնակութեամբ մը կը կապուի մարմին մը կը կազմէ, իւրաքանչիւր մասն իր յատուկ ձեւն ու գոյնն ունենալով, եւ այդ մասերը ա՛րողջութիւն մը կազմելով : Եւ նիւթին ու արտայայտութեան այդ համագոյութիւնն ալ այն պարզ պատճառովը չէ՞ որ հեղինակները իրենք իսկ եղած են անոնց ոչ միայն յղացողն ու գրողը այլ եւ եղանակողը, ճիշդ ինչպէս անոնցմէ ա՛յնչափ յետոյ բրաւ վակներ, որ իւրաքանչիւր բառի համապատասխան խաղ մը գտնել ուզելով, ինքը դրեց իր երաժշտութեան խօսքերը : Եւ ի՛նչ սխալ է այն դատաստանը որով միօրինակ դրած են մեր եկեղեցական երաժշտութիւնը : Միօրինակ . բայց հոն անձնիւր եղանակ ա՛յնպէս իր անհատականութիւնն ունի որ մարդ անոր գոյնը կը տեսնէ ունկնդրած ատեն . ձերմակ ստուերներու ծածանիլը չէ՞ք զգար «Զերգս հոգեւոր»ին խաղաղ ու լայն դաշնակութեանը մէջ, սեւ թախծութեան մը թանձրանալը չէ՞ք իմանար «լացի գիշերուան» սարսուղեցիկ ողբերուն մէջ, եւ կարմիր ցնծութեան բոց մը՝ Զատիկ առտուան մեծագոռ երգերուն մէջ որ Գրիստոսի յաղթանակը կը տարփողեն :

«Պէտք էր որ աւելի ընդարձակ եւ աւելի բազմակողմանի դնահատումով մը յարգէինք այդ պատուական նշխարները մեր հին քաղաքակրթութեան : Պէտք էր որ այդ քերթուածներն իրենց զուտ կրօնական գոյնին հետ սկսէին գեղարուեստական գոյնն ալ ստանալ, այնպէս որ զանոնք միայն եկեղեցիին մէջ չլսէինք, այլ մեր տունը, մեր գրադարաններուն մէջ ունենայինք անոնց հաւաքածոն՝

Աստուածաշունչին . Ս. Հայրերուն , «Նմանութեան» , Տանթէին եւ Միլտոնին քով : Պէտք էր որ ամէն հայ գրող պարտք համարէր ուսումնասիրել զանոնք եւ անոնց ճշմարտապէս տոհմային ոգիովը թափանցուէր : Պէտք էր որ քննադատութիւնը զանոնք իր մեկնութիւններովը լուսաւորէր , անոնց գեղեցկութիւններն ի վեր հանէր , անոնց տեղը որոշէր ընդհանուր գրական պատմութեան մէջ : Պէտք էր որ մեր երաժշտադէտները աւելի ուշադրութիւն դարձնէին այդ եղանակներուն վրայ , ճշդէին զանոնք եւ վերջնականապէս արգիլէին եղծուելէ , ինչ որ կը սկսին ըլլալ քանհաճ ու տղէտ երգողներու բերնին մէջ , եւ նոյն իսկ անոնց ուղղակի ներշնչման տակ երաժշտական գործեր արտադրէին , ինչպէս Չուհաճեան ըրած է թրքական եղանակներու համար : »

Այս յօդուածը քմծիծաղ մը արթնցոյց գրական պաշտօնակիցներէս ոմանց գէմքին վրայ . չպակսեցան անձեր , նոյն իսկ «Հայրենիք» ի խմբագրութեան մէջ , որոնք վրաս խընդացին այս «տիրացութեան» անիմաստ յարուսիս , «ծթոած ու անարուեստ լալկանութիւններու» նկատմամբ այս յետադարձ հիացումիս համար : Քնացուցիչ շարականներու վրայ զմայլի՛ր՛ Պիթովընի ու Վակների դարուն մէջ . . . եւ «մոտերնիզմ»ով տոգորուած , ո եւ է ասիականութեան հանդէպ անհաշտ արհամարհանքի որոշում տուած այդ «եւրոպացեայ»ները իմ սքանչացմանս մէջ հանէնտէնութեամբ ու ժամասիրութեամբ շաղախուած ցեղի մը առհաւական վերազարթումը կը կարծէին տեսնել եւ կ'արգահատէին վրաս : Այդ պարոններուն արհամարհանքը իմաստակ եւ արգահատանքը անիմաստ էր բնականաբար . ճիշդ Պիթովընն ու Վակները խորապէս հասկընալուս համար էր որ ես սքանչացում կ'ունենայի մեր հին երաժշտներուն վրայ որոնք , շատ աւելի պարզ ու նախնական ոլորտի մը մէջ , կրցեր էին , ըստ իս . ուրուագծել՝ անկեղծ , հոգեբուխ ու վսեմ երգերով՝ ինչ որ այդ տիւեգերական հանճարները հսկայ սահմանի մը մէջ պիտի իրագործէին մեր դարուն : «Նոր»ին սէրը երբեք պէտք չէ փակէ քննադատին ու գեղասէրին՝ հինին գեղեցկութեան ըմբռնումը Վակներ ու Պիթովըն իրենք իսկ , անտարա-

կոյս պիտի զմայլէին մեր եկեղեցական երաժշտութեան վրայ՝ եթէ զայն ճանչցած ըլլային . մեր շարականները , մերկացած իրենց օտարամուտ կեղեւէն , ամենէն պանծալի արտադրութիւնն են մեր ցեղին՝ Նարեկացիին քնարերգութեան ու մեր ժողովրդական երգերուն փափուկ ներշնչմանը հետ :

Կ'ըմբռնէք ուրեմն ո՛րքան մեծ եղաւ ուրախութիւնս՝ ճանչնալով Կոմիտաս վարդապետը , այսինքն սպասուած , երազուած մարդը հայկական երաժշտութիւնը վերակազմելու , ինչպէս եւ զայն Եւրոպային ծանօթացնելու համար : Կոմիտաս վարդապետը , որու անունը «Անահիտ» ի մէջ յիշուած է արդէն՝ Պերլինի մէջ տարի մը առաջ իր տուած մէկ արեւելեան նուագահանդէսին առիւիւ , այս օրերս Բարիզ եկաւ եւ մեր մատուցին մէջ պատարագի ժամերգութեան մէկ քանի կարեւորագոյն հատուածները երգեց : Յուզումը զոր զգացի իմանալով այդ վեհ ու սրտարուխ մեղեդիներն ու «Տէր ողորմեա»ին վսեմ ողբը , երգուած , պարզ , վճիտ , հզօր , «հայ» ոճով մը , իր արուեստը խորապէս գիտցող ու իր ցեղին գեղեցկագիտական ոգւոյն լիակատար ըմբռնումն ունեցող անձէ մը , կեանքիս ամենէն խորին ու ամենէն քաղցր յուզումներէն մին պիտի մնայ : Իրեն հետ ունեցած մէկ քանի տեսակցութեանցս մէջ , վարդապետը հաճեցաւ ինծի պարզել իր տեսութիւններն ու այն ծրագիրը զոր կ'ուզէ իրագործել . եւ ինծի կը թուի որ ինքը այն մարդն է որ անհրաժեշտ էր որպէսզի հայ երաժշտութիւնը արմատապէս վերանորոգուի իր ազաւազումէն ու անկումէն եւ որպէս զի ան ծանօթանայ եւրոպացի երաժշտադէտներուն եւ համաշխարհային երաժշտութեան մէջ սկսի գրաւել այն տեղը որուն արժանի է եւ զոր չունի զեռ :

Այսպիսի ձեռնարկ մը լիովին ի գրուի հանելու համար անհրաժեշտ են երկու պայմաններ , — եւրոպական երաժշտագիտութեան հիմնական հմտութիւն եւ հայկական երաժշտութեան Հայաստանի հողին վրայ իսկ մանրախոյզ ուսումնասիրութիւն : Կոմիտաս վարդապետը , որ Պերլինի քոնսերվատուարէն շըրջանաւարտ է ելած եւ արեւելեան Հայաստա-

նին բոլոր զիւղերը պարտած է՝ ամենէն հին անկիւններուն , ամենէն անշուք խորշերուն մէջ նախկին երգեցողութեան հետքերը փնտռելով , պիտի կարենայ այդ գործն ի կատար հանել ամբողջական եւ անթերի ձեւով մը :

Գործը մին է ամենէն բեղուններէն ու դեղեցիկներէն , բայց եւ մին ամենէն դժուարներէն . վերակենդանացնելու համար մեր եկեղեցական երաժշտութիւնը այն անխառն ու հայադրոշմ ձեւին մէջ որով ան իր կատարելութեանը հասաւ մեծ Շնորհալիին օրովը , պէտք է մանրակրկիտ կերպով ուսումնասիրել երաժշտութիւնը այն բոլոր ժողովուրդներուն որոնք ազգած են հայ ցեղին վրայ , — բիւզանդականը , պարսկականը , արաբականը , ասորականը , թրքականը , — փնտռել մեր եկեղեցական երաժշտութեան մէջ այն բոլոր տարրերը որ այդ օտար երաժշտութիւններուն կը վերաբերին , եւ ի վեր հանել ինչ որ կայ հոն գրտ հայկական , ինչ որ ինքնաբոլս ստեղծագործութիւնն է մեր ցեղին . խակ այդ «հայկական» նուաբայնութիւնը եւրոպական տարադի մէջ արեւմտեան աշխարհին ծանօթացնելու համար , պէտք է խորապէս ճանչնալ արեւմտեան երաժշտական գիտութիւնը : Եւ այս բարդ , այս վիթխարի գործին համար անհրաժեշտ է ունենալ , հմտութենէ վատ , բանաստեղծի հողի եւ ստեղծագործ երաժշտի տաղանդ : Ինծի կը թուի որ Կոմիտաս վարդապետը ունի այդ բոլորը . ծագումով թրքահայ , եւ հիմնովին ծանօթ տաճկական երաժշտութեան , Կոմիտաս վարդապետ իր ուսումնաստացած է Գէորգեան ձեռնարանին մէջ եւ հոն մօտէն ճանչցած է արեւելեան Հայութեան եկեղեցական ու ժողովրդական երգեցողութիւնը , եւ յետոյ դացած է Պերլին արմատապէս ուսումնասիրելու եւրոպական երաժշտութիւնը : Խորապէս կապուած իր ցեղին ու հողին , իր սիրտը Պեթովընին կամ Շոքենին թովութենէն չէ գերուած մինչեւ իր ցեղին անշուք բայց թաքուն գեղեցիկութիւններով յուռթի արուեստը արհամարելու իմաստակութեանն հասնելու աստիճան . ընդհակառակն , Արեւմուտքի գիտութիւնովն ամբացած իր միտքը իրեն նպատակակէտ ըրած է իր ամբարած հմտութիւնը

կիրարկել իր ցեղին արուեստը վերակենդանացնելու : Կոմիտաս վարդապետ Պերլինի համալսարանին մէջ երաժշտական դասախոսութեան մը առաջարկը մերժած է իր երկիրը վերագոհնալու , ինքզինքն իր առհմային արուեստին վերանորոգմանը նուիրելու համար . զինուած արեւմտեան գիտութեան հետախուզումի , վերլուծումի ու համագրութեան ապահով մեթոտովը , դացած է մտնել ժողովրդին մէջ , եւ փնտռել հիմքը «հայ» երաժշտութեան , ամենէն կորսուած գիւղականերու եկեղեցիները մտած է մրտիկ ընելու անուս քահանաներու երգեցողութիւնը որ ամենէն անեղծ ձեւովը կը պահպանէ հին հայ արուեստը , ունկնդրած է հայ աշուղներու , հարսներգու կամ մահերգակ հայ գեղջկուհիներու , հովիւներու կամ վիճակի խաղեր կանչող աղջիկներու մեղեդիները , եւ հողէն ժայթքած այդ բնատիպ ձայներուն մէջ ջանացած է գտնել ինչ որ խորքը կը կազմէ «հայ» երաժշտութեան , ճգնած է զայն փնտռել հայ եկեղեցական երաժշտութեան այն մասին մէջ որ օտար երաժշտութիւննեւ ուն հետ ո եւ է առնչութիւն չունի , եւ գտած է կապը զոր կ'որոնէր . իր այդ հետազօտութեանց շնորհիւ , այսօր գիտակցաբար կրնանք հաստատել թէ կայ «հայ» երաժշտութիւն մը , անկասկա՝ հայ ցեղին վրայ ազդեցողութիւն գործող մեծ ազգերուն երաժշտութենէն , երաժշտութիւն մը որ ծնունդն է միմիայն մեր ցեղին հողոյն եւ որ թերեւս կազմաւորուած հեթանոսական ամենահին շրջանին , անցած մնացած է եկեղեցական երգեցողութիւններուն մէջ ու տեւած է ժողովրդական խաղերուն աւանդական շնորհին մէջ (*) : Հայ արուեստի այդ խորքը գտնելու ջանքերէն յետոյ , Կոմիտաս վարդապետը թեւակոխած է արդէն իր գործին երկրորդ փուլը . ամբողջ պատարագը շարադրած է քառաձայն , եւրոպական արուեստի համաձայն , մեղեդիներուն հայկական կը-

(*) Կոմիտաս վարդապետը մտադիր է ի մօտոյ հայ հասարակութեան ծանօթացնել իր ուսումնասիրութիւններուն արդիւնքը՝ հայ ժողովրդական երգերու ընդարձակ շարք մը պրակ առ պրակ հրատարակելով , ծանօթագրութիւններով ու մեկնութիւններով ընկերացած :

նիքը անվթար պահելով. ու յօրինած է «սէն-
ֆոնիններ», «օրաթորի»ներ, ցայգերգներ,
մահաքայլերգներ, մեր եկեղեցական ու ժո-
ղովրդական երաժշտութեան մէկ քանի կարե-
ւորագոյն հատուածներէն ներչնչուելով. իր
այդ շարադրութիւնները, որոնցմէ ոմանք
էջմիածնայ մայր-եկեղեցւոյն մէջ սկսած են
երգուիլ արարողութեանց ժամանակ, անշուշտ
ընդհուպ Եւրոպայի կրօնական նուագահանդէս-
ներուն մէջ իրենց տեղը պիտի ունենան: Ֆը-
րանսացի վարպետներ եւ երաժշտասէրներ, Սէն
Սանս, Շարլ Պորտ, Տիւվալ, Օպրի, Կո-
միտաս վարդապետին հետ տեսնուելով եւ իր
ծրագրին հետ ծանօթանալով, զինքը հիացմամբ
խրախուսած են իր գործը շարունակել: Փա-
փաքելի է որ հայ ժողովուրդը գիւ-
նայ գնահատել այսպիսի արուեստագէտ մը
եւ տայ իրեն բոլոր միջոցները որ հարկաւոր
են որպէս զի ան ամբողջապէս ի գլուխ հանէ
այն հսկայ գործը որ զինքը քսաներորդ դա-
րու Շնորհալին պիտի կացուցանէ:

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ



Լ Ա Յ Գ Կ Ր Ը

Ժ. Գ.

ԼՈՒՍՆԻՆ ՕՐՀԱՍՐ

Ամառ գիշեր է, ես անձայն
Իմ երգիկիս վերայ նըստած
Վեր կը նայիմ. աստեղք միայն
կը սլուպըլան կամաց կամաց:

Անրաւ գիշերն աղօտալոյս
կը փողփողի լըսիկ, լըսիկ.
Ես կը նայիմ խըռովայոյզ,
Ու կը հըծծեն մանրը ճըճիք:

Բայց աւասիկ երկինք բացաւ
Արեւմուտքի մըթին կողմը
Մարդարտազարդ ամպեայ անձաւ,
Եւ կը հըծծէ տրտում հողմը:

Կանայց ցոլքեր կը ցոլցըլան,
Ու երեւան կ'ելլէ հոգին:

Աղօտ հոգին օրհասական
Եւ լուսաթափ գունատ լուսին:

Ամպայարկին տակ դող ի դող
Կը ցընդի ան՝ շաղ կաթելով,
Եւ երփնազան միգամած շող
Կը պաղպաղէ՝ զայն պատելով:

Ո՛հ, հիւժուեցաւ հալեցաւ ան
Անմահական ըղձամմբ տարփմա Իր.
Այժմ կը նընջէ կիսակենդան.
Թող քողարկէ մահը թուխ ամպ:

Թող սիրատարով լուսնահոգին
ճազաղ քընով անդորրանայ,
Թող նըշոյլներն ալ թափթըփին
Եւ թող գիշերնալ որը մընայ:

Թող ծաղկըներն անոյշ անոյշ
Թաղմանական բուբմամբ ողբան,
Թող մարմըրին հեղ ու քընքոյշ,
Թող կողկողին ու թող ծըփան:

Գամին կակուղ կը մըրմընջէ,
Եւ ամէն կողմ խուլ սօսաւիւն
Կը մըրմընայ ու կը շընջէ,
Ինչպէս սիրոյ վարար աւիւն:

Վըախտ ու թուխ վըհուկները
Կ'ուհկընդրեն, խոր խոր կը նային,
Եւ կը ծըծեն ոընգունքները
Մեզկ շուռնջ մը, բուռն ու սիրային:

Առաւօտեան գէմ լուսնակը
Քոյրը տեսաւ որ գեղեցիկ
Եւ նոր կապած ոսկի թագը
Կը շողշողար հեղիկ հեղիկ:

Ան փըղոսկրեայ քընարանէն
Նոր գուրս կ'ելլէր ու կը նաղէր,
Աչերն անոյշ ու հըրեղէն,
Ոտուըներէն լոյս կը հոսէր:

Բոլոր երկինք կ'օրհնէր զանի,
Ու կը ցընծար բոլոր աշխարհ,
Դէմքը պայծառ ու հոլ սնի
Կը ճաճանչէր հըրաշավատ:

Դարձեալ ողորմ սէրը յիշեց
Աղօտ լուսինն ու գալկացաւ.
Դարձեալ անձուկ զանի մաշեց,
Մըշտամորմոք եւ անհուն ցաւ:

Շատ գիշերներ լուս ծովուն մօտ
Խորհրդագածուփ թափառական .
Նըւաղեցաւ սիրակարօտ ,
Եւ արցունքները կաթեցան :

Թող քու օրհասըդ , ո՛վ լուսին ,
Անոյշ ըլլայ , հանգարտ ըլլայ ,
Թող լայ ըզքեզ տրտու մ հողին
Եւ կոյս աղջիկն ալ թող քեզ լայ :

Պող շուշաններն իրենց սպիտակ
Եւ խոնջ թերթերը մերկանան ,

Եւ թող նընջեն կոճակին տակ ,
Թող սուր ճըջեր վեր բարձրանան :

Մինչև որ դա՛րձեալ նորափայլ
Կենդանանաս եւ դառնաս մեզ ,
Ժուռ դաս երկնից մէջ լուսաքայլ
Եւ արծաթի ճաճանչ ցանես .

Եւ սա ս ծովուն ալիք ու խաղ ,
Գիշերային երկիրն մողես ,
Եւ ծածանիս դանդաղ դանդաղ՝
Ամպածածուկ երազի պէս :

ՎՍՀՐԱՄ ՍՎՍՃԵՆ

ԱՐՈՒԵՍՏԻ ԷՋԵՐ

— 00 —

ՅՈՒՆԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ ԱՂԵՑՈՒԹԻՒՆԸ



Յունական արձանագործութեան պատմութեան մէջ է որ արուեստին ու կեանքին առնչականութիւնը առաւել քան երբեք ակներև գծերով յայտնուած է : Մարմարէ կամ արջրէ մարդը յօրինելու համար , նախ կենդանի մարդը յօրինած են , եւ մեծ արձանագործութիւնը իրենց մէջ կը վարգանայ ճիշդ այն միջոցին երբ նաեւ կը զարգանայ այն հաստատութիւնը որուն շնորհիւ կը կազմուին կատարեալ մարմինները : Այդ երկուքը իբրտու կ'ընկերանան՝ ինչպէս Ձեւտրգիքը , եւ հիանալի հանդիպումով մը , հեռաւոր պատմութեան անորոշ վերջալոյսը իրենց երկու նորածագ ճառագայթներովը կը լուսաւորուի :


Է . Դարուն առաջին կէսին մէջ է որ երկուքը միասին երեւան կուզան : — Այդ պահուն , արուեստն իր տեքնիքական մեծ զիւտերը կը կատարէ : 689ին մօտ , Բուստարէս Սիկիոնացին կաւով դէմքեր ձեւելու եւ կրակի մէջ եփելու գաղափարը կ'ունենայ , ինչ որ զինքը կ'առաջնորդէ տանիքներու կատարը դիմակներով զարդարելու : Միեւնոյն թուականին , Հրօիկոս եւ Թէոդորոս Սամոսացին արոյրը կաղապարի մէջ հոսեցնելու միջոցը կը գտնեն : 550ին մօտ , Մելաս Բիոսացին առաջին մարմարէ արձանները կը շինէ , եւ ոլիմպիատօնէ ոլիմպիատօն , ամբողջ այդ դարավերջին ու բոլոր յաջորդ դարերուն մէջ , արձանագործութիւնը հետզհետէ իր նախկին բըրտութիւնը կը կորսնցնէ , իր ամբողջացումն ու կատարելագործումը գտնելով մարական պատերազմներէն յետոյ : — Պատճառը այն է որ այդ միջոցին պարարուեստն ու մարմնամարդութիւնը կանոնաւոր եւ ամբողջական հաստատութիւններ կը դառնան : Աշխարհ մը վերջացած է , Հոմերի եւ զիւցաղներգութեան աշխարհը . ուրիշ աշխարհ մը կը սկսի , Արքիլոքոսի , Կալլինոսի , Տերպանտրի , Ոլիմպիոսի եւ քնարերգական բանաստեղծութեան աշխարհը : Հոմերէն եւ իր շարունակողներէն , որ Ը . եւ Թ . դարերուն ապրած են , մինչև տաղաչափական նոր ձեւերն ու նոր երաժշտութիւնը՝ որոնք յաջորդ դարուն կազմուած են , լայն կերպարանափո-

խաւթիւն մը տեղի ունեցած է ընկերութեան եւ բարքերուն մէջ: Մարդկային հորիզոնը ընդարձակուած է եւ օրէ օր աւելի կ'ընդարձակուի: Ամբողջ Միջերկրականը խուզարկուած է հիմա կը ճանչնան Սիկիլիան ու Եգիպտոսը, որոնց մասին Հոմերոս շրոյցներ գիտէր միայն: 632ին, Սամոսցիք առաջին անգամ ըլլալով կը նաւարկեն մինչեւ Տարտեսոս, եւ իրենց շահածին տասանորդովը՝ իրենց Հերէ Դիցուհւոյն կը նուիրեն արոյրէ խոչոր խառնարան մը, կորճատիւժներով զարդարուած եւ տասերկու արմկաչափ երկայնութեամբ երեք ծնրադիր արձաններու վրայ կըթընած: Գաղթականութիւնները, բազմապատկուելով, կուգան Մեծ-Յունաստանի, Սիկիլիոյ, Փոքր-Ասիոյ, Եւքսինեան Պոնտոսի ափունքները բնակաւորել ու շահագործել: Բոլոր ճարտարարուեստները կը կատարելագործուին. հին քերթուածներուն յիսուն թիակով նաւակները երկու հարիւր թիակով ցուկանաւեր կը դառնան: Քիոսացի մը երկաթը կակղեցնելու, կարծրացնելու եւ փակցնելու արուեստը կը հնարէ: Դորիական տաճարը կը կառուցանեն. գրամը, թուանշանը, գիրը, որոնք անձանօթ էին Հոմերոսին, հիմա ծանօթ են ամենուն. ռազմադիտութիւնը կը փոխուի, հետիոտն կը պատերազմին հիմա եւ մէկ գծի վրայ շարուած, փոխանակ կառքի մէջ առանց կարգաւորութեան մարտընչելու: Մարդկային ընկերութիւնը, «Իլիական»ին եւ «Ոդիսական»ին մէջ ա՛յնքան թոյլ, իր հիւսքերը կը սեղմէ. փոխանակ Իթակէի մը, ուր իւրաքանչիւր ընտանիք անշատ կ'ապրի իր անկախ պետին հրամանին տակ, ուր հանրային իշխանութիւններ գոյութիւն չունին, ուր քսան տարի առանց ժողով գումարելու կրնան ապրիլ, հիմա փակ ու պահպանուած ոստաններ, դատաւորներ ունեցող եւ ոստիկանութեան մը հնազանդող, հաստատուած են, եւ ընտրուած պետերէ կառավարուող հաւասար քաղքենիներու հանրապետութիւններ կը դառնան: Միեւնոյն ատեն՝ եւ հակազդեցութեամբ մը՝ մտքին մղումը կը պէսպիսանայ, կ'ընդարձակուի եւ կը վե-



ՊԱՏԵՐԱԶՄ ՅՈՅՆԵՐՈՒ ԵՒ ԱՄԱԶՈՆՆԵՐՈՒ (ՀԱՐԹԱՔԱՆԳԱԿ) (Վիեննայի թանազարան)

Միեւնոյն



ՄԵՐՆ ԱՂԵՐՍԱՆԴՐ

Հատուած՝ Սիտոնի դամբարանին «Առիւծի որսորդութիւն»էն
(Կ. Պոլսոյ թանգարան)

րանորոգուի : Անշուշտ բուրո՞վին քերթողական կը մնայ նորէն . արձակը դեռ աւելի ետքը պիտի սկսի գրուիլ . բայց միօրինակ ոգումը սր դիւցազններգական վեցոտնեանին կը միանար , տեղի կուտայ տարբեր չափերով այլազան երգերու բազմութեան մը : Հնգոտնեանը կ'աւելցնեն վեցոտնեանին , «թրաչէ»ն , «եամպ»ը , «անաբետ»ը կը հնարեն . նոր ոտքերն ու հին ոտքերը կը զուգարանեն երկտողեաններու , տուներու եւ ամէն տեսակ չափերու մէջ : Քիթարը որ չորս լար ունէր , եօթը ունի հիմա . Տերպանտրոս իր եղանակները կը ճշդէ եւ երաժշտութեան օրէնքները կ'որոշէ . Ուլիմպիոս , յետոյ Թալետաս , աւելի կ'ստարեալ կերպով կը յարմարցնեն քիթարի , սրինգի եւ ձայներու կշռութիւնները՝ երանգներուն այն բանաստեղծութեանց որոնց կ'ընկերանան : Ջանանք աչքերնուս առջեւ պատկերացնել այդ մենէ ա' յնքան հեռու եղող աշխարհը եւ որուն բեկորները գրեթէ բոլորն ալ կ'որսուած են . չկայ աշխարհ մը որ ատոր չափ տարբեր ըլլայ մերինէն եւ որ հասկցուելու համար երեւակայութեան այդքան մեծ ճիգ մը պահանջէ . բայց նախնական եւ տեւական կաղապարն է ան , որմէ ելած է յունական աշխարհը :

Երբ քնարերգակ բանաստեղծութեան մը վրայ գաղափար ունենալ ուզենք , Վիքթոր Հիւկոյի գեղօններն ու Լամարթինի «սթանա»ները մտքերնիս կը բերենք . ատոնք աչքով կարգացուելիք բաներ են , կամ առ առաւելն կարելի է վանոնք կէս ձայնով արտասանել՝ բարեկամի մը քով , սեղանակին լուծեանը մէջ . մեր քաղաքակրթութիւնը ուրիշ հողիի մը առջեւ իր պաղտնիքը բացող հողիի մը խօսքին նկարագիրը տուած է բանաստեղծութեան : Յոյներունը ոչ միայն բարձրաձայն կ'արտաբերուէր , այլ նուազարաններու ընկերակցութեամբ կ'արտասանուէր , կ'երգուէր , նոյն իսկ ընկերակցութեամբ մնջկատակի եւ պարի : Յելլենք Տելլարթը կամ տիկին Վիարտօն՝ երբ կ'ըլի քի «Իփեգենիա»ին կամ «Որփէոս»ին «Բեսիթաթիֆ»ները կ'երգէին , Ռուփէ տը Լիլը կամ Օր . Ռաշէլը երբ «Մարսեյեզ»ը կ'արտասանէին , «Ալկեստիս»ի պարերդ մը այնպէս ինչպէս այժմ կը տեսնենք թատրոնը , պարագլխով մը , նուագախումբով մը եւ խրմբակներով որոնք իրարու կը շաղապասուէին եւ իրարմէ կը զատուին՝ տաճարի մը սանդղակն առջեւ , ոչ թէ՛ ինչպէս այսօր՝ տեսարանի լապտերաշարքին լոյսին տակ ու նկարուած տեքորներու առջեւ , այլ հրապարակին վրայ եւ ճշմարիտ արեւուն տակ . այդպէսով պիտի կարենանք ամենէն նուազ անձիչգ գաղափարը կազմել այդ հանդէսներուն եւ այդ բարքերուն մասին : Ամբողջ մարդը , միտք եւ մարմին , հոն շարժման մէջ կը մտնէ , եւ այդ շրջանէն մնացած ոտանաւորները , օրերայի մը լիպրեթիոյն փրցուած մէկ քանի տուներ են միայն : Քորսիքայի գիւղերուն մէջ , յուզարկուորութեան ատեն , եղերամայրը վրէժխնդրութեան երգեր կը յանկարծաբանէ մեծաձայն՝ սպաննուած մարդու մը մարմնոյն առջեւ , կամ ողբի երգեր՝ վաղամեռիկ աղջկան մը դապաղին վրայ : Քալապրայի կամ Սիկիլիոյ լեւներուն մէջ , պարի օրերուն , երիտասարդները՝ իրենց կեցուածքներով ու շարժուածքներով՝ սիրոյ փոքրիկ տառապանք եւ տեսարաններ կը ներկայացնեն : Մտաբերենք՝ նմանօրինակ կլիմայի մը տակ , աւելի գեղեցիկ երկնքի մը ներքեւ , փոքրիկ ոստանի մը մէջ ուր ամէն մարդ բոլոր միւս բնակիչները կը ճանչնայ , նոյնչափ երեւակայոտ ու նոյնչափ շարժկոտ մարդիկ , նոյնչափ յուտ յուղուող , յուտ արտայայտող , աւելի կրակոտ ու աւելի նոր հողիով , աւելի հնարագէտ , աւելի ճարպիկ , մարդկային կեանքին բոլոր վայրկեաններն ու բոլոր գործողութիւնները գեղեցկացնելու աւելի հակամէտ մտքով մը օժտուած մարդիկ : Այդ երաժշտական մնջկատակը , զոր այժմ կ'զգիացեալ հատուածներով միայն կը դանենք եւ անշուք անկիւններու մէջ , պիտի ընդլայնի , պիտի բաղմապատկուի հարիւր ճիւղի , եւ քովանդակ գրականութեան մը նիւթ պիտի հայթայթէ : Չպիտի ըլլայ զգացում մը զոր շարտայայտէ ան , չպիտի ըլլայ սոսկական կամ հանրային կեանքի ուր է տեսարան մը զոր չգայ զարդապատել , չպիտի ըլլայ դիտաւորութիւն մը կամ կացութիւն մը որոնց չբաւէ : Բնական լեզուն պիտի դառնայ , այնքան տիեզերական ու սովորական կերպով գործածուած որքան մեր գրուած կամ տպուած արձակը . մեր արձակը անսակ մը չոր նօթագրութիւն է , ոչ ուր այսօր զուտ իմացականութիւն մը կը հաղորդակցի զուտ իմացականութեան մը հետ . բաղդատմամբ այդ համակ նմանօրական ու մարմնական հին լեզուին ուրիշ բան չէ ան այլ եւս բայց ի՞նչ ալ ճեպարա մը եւ էվէլցուկ մը :

Յրանսերէնին շեշտը միօրինակ է, երգ չունի, երկարներն ու սուղերն անոր մէջ քիչ զուրս կը ցատքեն, հաղիւ կը զանազանութիւն իրարմէ: Պէտք է մտիկ ըրած ըլլալ երաժշտական լեզու մը, թասոյի մէկ սթանձան արտասանող գեղեցիկ իտալական ձայնի մը յարատեւ մելադաշնակութիւնը, գիտնալու համար թէ ի՛նչպէս հնչիւնն ու կշռութիւնը իրենց ազգեցութիւնն ու վարակումը կը տարածեն մեր բոլոր ջիզերուն մէջ: Այսպէս էր յունարէն լեզուն որուն կմախքը ունինք այսօր: Լուծիչներէն ու մեկնիչներէն գիտենք թէ հնչիւնն ու չափը անոր մէջ այնքան մեծ տեղ մը կը բռնէին որքան գաղափարն ու պատկերը: Բանաստեղծը որ տեսակ մը տաղաչափական ձեւ կը հնարէր, տեսակ մը զգայութիւն հնարած կ'ըլլար:



ՊԱՐՈՒՀԻ ՎԻԼԼԱ ԱԼՊԱՆԻԻ

Երկարներու եւ սուղերու այսինչ զուգախառնումը ինքնին «ալլելիօ» մը կը ձեւացնէ, այնինչը «լարիօ» մը, մէկ ուրիշն ալ «սքերցօ» մը, եւ իր թեքումներն ու իր նկարագիրը կը գրոշմէ՝ ոչ միայն մտածումին այլ եւ ժեսթին ու երաժշտութեանը: Ահա ինչպէս այն դարը որ քնարերգական բանաստեղծութեան ընդարձակ ամբողջութիւնն արտագրած է, միեւնոյն ատեն արտազրած է պարարուեստի ոչ նուազ ընդարձակ ամբողջութիւնը: Երկու հարիւրի չափ յունական պարերգի անունը ծանօթ է մեզի: Աթէնքի մէջ մինչեւ տասնվեց տարեկան հասակը, պարարուեստը տղին բովանդակ դաստիարակութիւնը կը կազմէր:

«Այդ միջոցին, կ'ըսէ Արիստոփան, միեւնոյն թաղին պատանիները, երբ քիթարի դասատուին տունը կ'երթային, փողօցներուն մէջ միասին կը քալէին, կարգով, եւ բոկոսն, նոյն իսկ երբ ձիւն տեղար մաղէ մը թափող ալիւրի պէս, Հոն կը նստէին, առանց սրունդներնին սեղմելու, եւ դասատուն անոնց կը սորվեցնէր «Պալլաս ահաւոր, քաղաքակործան» աղօթերգը կամ «Աղաղակ մը որ հեռուն բարձրացաւ»ը, եւ ձայներնին կ'ուռեցնէին այն պինդ ու աննական ներդաշնակութեամբը զոր իրենց հայրերն անոնց փոխանցած էին:»

Մեծագոյն ընտանիքներէն մէկուն պատկանող երիտասարդ մը, Հիպպոկլէիտէս, Սիկիոն եկած էր՝ Կլիսթեն «բռնաւոր»ին տունը, եւ մարմնական բոլոր հրահանգներու մէջ լիակատար հմտութիւն մը ունենալով, ուզեց խնջոյքին իրիկունը՝ իր քաջավարժութիւնը ամենուն ցոյց տալ: Սրնդահար աղջկանը հրամայեց որ «Եմմելիան» նուագէ, ու պարեց զայն, յետոյ՝ վայրկեան մը ետքը, սեղան մը բերել տուաւ, վրան ելաւ եւ լակիդեմոնական ու աթենական պարարուեստի այլեւայլ ձեւեր պարեց: — Այսպէս պատրաստուած, միանդամայն «երգող» եւ

«պարող» էին, եւ իրենք իրենց հաճոյքին համար կը բանաստեղծական ազնիւ տեսարանները, որոնց համար




ԴԻՈՆԻՍՈՍ (Բաքոս) Պրոնզէ արձանիկ
(Հաւաքածոյ Պ. Ս. Սամպոնի)

յատուէ մը» : Լեւապոսի մէջ շատ կայրն այդպիսի տուներ, Սափիովինէն զատ : Կինք կը վարէին զանոնք : աշակերտներ ունէին որոնք մօտակայ կղզիներէն կամ ծովափունքներէն կուգային, Միլէէն, Կոլոփոնէն, Սալամինայէն, Պամփիլիայէն : հոն տարիներով կ'ուսանէին երաժշտութիւն, գեղեցիկ կեցուածքներու արուեստը : կը ծաղ-

ներկայացնէին այն նկարագրի ու Ակումբներու խնջոյքին մէջ, ճաշէն յետոյ, գինեձօնքներ կ'ընէին ի պատիւ Ապողոնի : յետո, կուգար բուն իսկ հանդէսը (*), մեջկատակով ընկերացած արտասանութիւնը, քիթարի կամ սրինդի հետ քնարերգական տաղասացութիւնը, «սոլօ» մը՝ որ յանկերգով մը կ'աւարտէր, ինչպէս՝ յետոյ՝ Հարմօղիտսի եւ Արիստոգիդոնի երգը, «տուօ» մը՝ որ կ'երգուէր եւ կը պարուէր, ինչպէս յետոյ՝ Քսենոփոնի խնջոյքին մէջ՝ Բաքոսի եւ Արիանէի հանդիպումը : Երբ քաղքենի մը «բոնաւոր» դառնար եւ ուզէր կիանքը վայելել, այդպիսի հանդէսները կ'ընդարձակէր եւ իր շուրջը մշտապէս կը հաստատէր : Պոլիկրատ, Սամոսի մէջ երկու բանաստեղծ ունէր, Իպիկոս եւ Անակրէոն, այդ հանդէսներուն կարգադրութիւնը վարելու եւ նոնց երաժշտութիւնն ու ստանաւորները պատրաստելու համար : Երիտասարդները որ այդ քերթուածները կը ներկայացնէին, առանէն գեղեցիկներն էին որ կարելի ըլլար գանել, Պաթիլլոս որ սրինդ կ'ածէր եւ յոնիական ձեւով կ'երգէր, Կլէոբոլ՝ կոյսի աղւոր աչքերով, Յիմալոս որ պարի մէջ «բեքթիս» կը գործածէր, Սմերգիէս՝ յորդաուսա ու գանգուր մազերով, զոր Սիկոնեան Թրակացոց մէջէն գացած գտած էին : Օրբայի ներկայացում մըն էր՝ փոքր ձեւով, ու տան մէջ : Այ, ատենուան բոլոր քնարերգական բանաստեղծները միանդամայն պարապետ են : իրենց տունը տեսակ մը «Քոնսերվատուար» է (**), «մուսու-

(*) Քոմոս : (**) Սիմոնիդէս Կէովսացին սովորաբար Պարատունը կը բնակէր, Ապողոնի տաճարին մօտ :



ԿԱՌԱՐՇԱԻ (Հարթաքանդակ)
(Հաւաքածոյ Լուլէի զուքսին, Լիզպոնա)


բնին աղէտները, «պղտիկ դեղջկուհիները որոնք իրենց չըջաղցեստն ոտքերնուն պճեղն ի վեր
անգրիճեկ չէին գիտեր. պարապետ մը կ'ընարէին եւ պարախումբեր կը պատրաստէին յուզար-
կաւորութեան ողբերուն կամ հարսնիքի խրախճանքներուն համար : — Այսպէս՝ սոսկական
կեանքը ամբողջ, իր հանդիսութիւններովն ինչպէս իր հաճոյքներովը, կը նպաստէր որ մար-
դը ըլլար — բայց բառին ամենէն գեղեցիկ իմաստովը եւ արժանապատուութեան կատարեալ
պահպանումով մը, — ինչ որ մտնք հիմա երգիչ, ձեւարար, օրինակ եւ դերասան կը կոչենք :

Հանրային կեանքը միեւնոյն արդիւնքը արտադրելու կը զործակցէր : Յունաստանի
մէջ պարարուեստը կրօնքն եւ քաղաքականութեան մէջ կը մտնէ, իւրապէս լութեան եւ պա-
տերազմի ժամանակ, մեռելները պատուելու եւ յաղթանակները ներբողելու համար թարգելեանց
յոնիական տօնին, Միմներմոս բանաստեղծն ու իր նաննօ սիրուհին թափօրին կ'առաջնոր-
դէին՝ սրինգ ամեղով : Կալլինոս, Ալկէոս, Թէոգնիս, հրաւէր կը կարդային, ոտանաւորներով
դոր իրենք խակ կ'երգէին, իրենց քաղաքակիցներուն կամ իրենց կուսակցութեանը : Երբ Ա-
թենացիք, մէկ քանի անգամ պարտուած, որոշեցին մահուան դատապարտել ու որ Սալամի-
նայի վերստին տիրելու խօսքն ընէր, Սողոն, պատգամաւորի պէս հաղուած, Հերմէսի գլխարկ
մը գլուխը, յանկարծ ժողովին մէջ երեւցաւ, ելաւ այն քարին վրայ ուր պատգամաւորները
կը կանգնէին, եւ այնքան կորովով արասանեց այդ նիւթին վրայ յօրինած իր տաղը, որ ե-
րիտասարդները անմիջապէս մեկնեցան «որուն կողմին ազատելու եւ Աթէնքին ճակտին նա-
խատինքն ու ամօթը սրբելու» : Պատերազմի ատեն, Սպարտացիները երգեր կ'արասանէին
վրաններուն տակ : Իրիկունը, ճաշէն յետոյ, իւրաքանչիւրը ոտքի կ'ելլէր եզերերգութիւն մը
արտասանելու եւ մեղկատակելու, եւ զօրապետը մրցանակն առնողին մտի աւելի խոշոր կտոր
մը կուտար : Անշուշտ տեսարանը գեղեցիկ էր, երբ այդ մեծղի երիտասարդները, Յունաստանի
ամենէն ուժեղներն ու բարեկալմիները, իրենց երկայն ու գլխուն գագաթը խնամքով կապուած
մազերովը, իրենց կարմիր պատմուճանովը, իրենց լայն ու յղկեալ վահաններովը, իրենց հե-
րոսի եւ ըմբիշի շարժումներովը, կուգային երգել սապէս ոտանաւորներ :

«Քաջարար կ'ուրնք այս երկրին համար, որ մեր հողն է,
Եւ մեռնինք մեր գաւակներուն համար՝ առանց մեր հողին խնայելու :
Եւ դուք, երիտասարդներ, ամուր կուռեցէք՝ քով քովի,
Թող ձեռնէ ոչ մէկը ամօթալից փախուստին ու վախին օրինակը չտայ,
Այլ մանաւանդ ձեր կուրծքին մէջ մեծ ու արի սիրտ մը ունեցէք...»

Ալեւորները, ծերունիները, որոնց ծունդերն արագաչարժ չեն այլ եւս՝
 Մի՛ թողուք ու փախչիք,
 Որովհետեւ ամօ՛ թ է որ առաջին կարգերուն վրայ, երիտասարդներուն առջեւը,
 Զարնուած իյնայ ծեր մարդ մը որուն մազն ու մօրուքը ճերմկած է .
 Ամօ՛ թ է թողուլ որ ան գետին իյնայ ու փոշիին մէջ իր արի հոգին փչէ,
 Զեռքովը սեղմելով իր մերկ մորթին վրայ բացուած արիւնոտ վէրքը :
 Ընդհակառակն ամէն բան երիտասարդներուն կը վայլէ
 Երբ դեռ պատանութեան գեղափայլ ծաղիկն ունին :
 Այրերն անոնց վրայ կը հիանան, կիները զանոնք կը սիրեն,
 Եւ գեղեցիկ են դարձեալ՝ երբ առաջին կարգին վրայ խոցուած իյնան . . .
 Ինչ որ տգեղ է տեսնել, փոշիին մէջ յեաւմնաց մարդն է՝ ետեւէն վիրաւորուած,
 Կունակը նիզակի մը ծայրովը ծակուած :
 Թող ամէն մարդ, խոյանքէն յետոյ, զօտեպինդ կենայ .
 Երկու ոտքովը հողին գամուած, ակուններովը պրկուէք խածնելով,
 Բարձքերը, սրունդները, ուսերն ու կուրծքին վարի մասը՝ մինչեւ փորը, ամբողջ մարմինը
 Լայն ասպարովը ծածկուած,
 Թող մարտնչի՝ սաղաւարտ սաղաւարտի դէմ, գարգմանակ գարգմանակի դէմ, կուրծք կուրծքի
 Եւ թող դէմ դիմաց, մարմին մարմինի փակած, երկայն տէգովը կամ սուրովը (դէմ
 ձեղքէ ու սպաննէ թշնամին : յ(Տիրտէոս)

Այսպիսի երգեր կային զինուորական կեանքի բոլոր պարագաներուն համար,
 ի միջի այլոց՝ «անարեսթ»ները, սրինգի ընկերակցութեամբ, յարձակումն սկսելու համար :
 Նմանօրինակ տեսարան մը կրկնուեցաւ Ֆրանսական Յեղափոխութեան առաջին խանդավա-



ՔԱՐԻԱԴԻՏՆԵՐՈՒ «ԼՈՃՃԻԱ»Ն (Երեքթէյունին հարաւային կողմը)

ոութեան միջոցին, այնօրն ուր Տիւմուրիէ, զլիսարկը սուրին ծայրն անցընելով, ժեմմարի վա-
 ոիվերը մազլցաւ, ու «Շան տիւ տէբառ»ը երգեց, եւ զինուորները նոյն երգը երգեցին ա-
 նոր հետ վազելով : Այս աններդաշնակ մեծ զոչումէն կրնանք հետեւցնել կանոնաւոր պատե-
 րազմական խմբերգ մը, հեղին երաժշտական քայլերգ մը : Հաս մը Իրգուեցաւ Սալամինայի

յաղթանակէն յետոյ, երբ Սոփոկլէս, զեռ տասնէինգ տարեկան, Աթէնքի ամենէն ազւոր պատանին, երեւցաւ մօրէմերկ՝ ծէսին համեմատ, . եւ «բէան»ը երգեց ի պատիւ Ապողոնի, զինուորական հանգիստութեանց մէջտեղը եւ յաղթական խուրճին առջեւ:

Բայց կրօնական արարողութիւնները պարարունստին աւելի նիւթ կը մատակարարէին քան քաղաքականութիւնն ու պատերազմը: Յոյները այնպէս կը մտածէին թէ ամենէն ախորժելի տեսարանը զոր կարելի էր ընծայել աստուածներուն, այն էր զոր կը ներկայացնէին ազ-



ԼԵՒՍ. (Նկար Պոմպէիի մէջ գտնուած)

ւոր քաջատոյգ մարմիններ՝ այն բոլոր գիրքերուն մէջ որ ոյժ ու առողջութիւն ցոյց կուտան: Այս պատճառով է որ իրենց ամենէն սրբազան տօները օրերայի սողանցութիւններ եւ լուրջ «պալէթ»ներ էին: Հատընտիր քաղքենիներ, երբեմն ալ՝ ինչպէս ի Սպարտա՝ ամբողջ քաղաքը (Քրիմուպետիա), պարախումբներ կը կազմէին աստուածներուն առջեւ. իւրաքանչիւր կարեւոր քաղաք իր բանաստեղծներն ունէր, որ երաժշտութիւնն ու ոտանաւորները կը յօրինէին խմբակներն ու շրջաբերութիւնները կը կարգադրէին, կեցուածքները կը սորվեցնէին, երկարօրէն կը հրահանգէին զերասանները, զգեստները կ'որոշէին: Այգպիսի արարողութեան մը

վրայ գաղափար ունենալու համար, ժամանակակից միակ օրինակ մը ունինք, — այն ներկայացուցիչն էր, որ մինչև այսօր կը արուին: Թատր տարի՛: անգամ մը, Օպերամիերկաուի մէջ՝ ի Պավիերա, ուր Միջին Դարէն ի վեր, աւանին բոլոր բնակիչները, հինգ վեց հարիւր հոգի, տղայութիւններնէն ի վեր այդ բանին պատրաստուած, հանդիսաւորապէս կը խաղան Յիսուսի Չարչարանքը: Այդ հանդէսներուն մէջ, Ալկման եւ Ստեսիքոսը միանգամայն բանաստեղծ, դպրապետ եւ պարապետ էին, երբեմն պատարագիչ, առաջին պարագլուխ՝ մեծ կրօնախաղերուն մէջ, ուր երիտասարդներու եւ աղջիկներու խմբակներ հասարակութեան առջեւ զիւցազնական կամ աստուածային աւանդովէպը կը ներկայացնէին: Այս նուիրական պալլեթներէն մէկը, բաքոնապարը, յետոյ յունական ողբերգութեան ծնունդ տուաւ: Այդ ողբերգութիւնն իսկ նախ ուրիշ բան չէ բայց եթէ կրօնական աօնը, միանգամայն կատարելագործեալ եւ վերածնալ, հրապարակէն թատրոնի մը շրջափակին մէջ փոխադրուած, յաջորդութիւն մը պարերդներու որոնք կտրուած են գլխաւոր անձնաւորութեան մը վիպումովն ու ոգումովը, նման Սեպասթիէն Պախի մէկ «Աւետարան»ին, Հայտնի «Յօթը խօսքերուն», օրաթորիոյի մը, Սիքստեան մատուռին մէջ կատարուած պատարագի մը՝ ուր միեւնոյն անձերը կատրներ երգէին ու միանգամայն խումբերը ձեւացնէին:

Այդ բոլոր բանաստեղծութիւններուն մէջէն, ամենէն ժողովրդականներն ու այդ հեռաւոր բարձրը մեզի ըմբռնելի գարձնելու ամենէն կարողները երգօններն են որ չորս մեծ խաղերուն յաղթանակները կը ներբողեն: Ամբողջ Յունաստանէն, Սիկիլիայէն ու կղզիներէն Պինդարոսին կը դիմէին՝ այդ երգօնները խնդրելու համար, ինք անձամբ կ'երթար կամ իր Ստիւմիալացի եղբայր Բարեկամը կը զրկէր, պարախումբին սորվեցնելու համար իր երգին պարը, երաժշտութիւնը եւ ոտանաւորները: Հանդէսը կը սկսէր թափօրով մը եւ պատարագով մը. յետոյ ըմբիշին բարեկամները, ազգականները, քաղաքին մեծամեծները, խնջոյքի սեղանի մը շուրջը կը բոլորուէին: Երբեմն երգօնը կ'երգուէր թափօրի մը միջոցին, եւ հանդիսախումբը կանգ կ'առնէր վերջամասը արտասանելու համար. երբեմն ալ՝ խնջոյքէն յետոյ, զբաներով, նիզակներով եւ սուրերով զարդարուած մեծ սրահին մէջ (Տեսէք Ալկէոսի ոտանաւորներն իր տանը վրայ): Իերասաններն ըմբիշին ընկերներն էին եւ իրենց դերերը կը խաղային այն հարաւորի աշխոյժով որ կը տեսնուի Իտալիոյ «Բոմետիա տելլ'Արթէ»ին մէջ: Բայց կատակերգութիւն մը չէր իրենց խաղացածը, իրենց դերը լուրջ էր, կա՛մ մանաւանդ դեր մը չէր. ամենէն խորին եւ ամենէն ազնիւ հաճոյքը ունէին զոր մարդ կարենայ վայելել, հաճոյքը զիրենք զընտելի կեանքէն վեր քարձրացած զգալու, մինչև Ոլիմպոսին բարձունքներուն ու ճաճանչումին մէջ վերացած՝ ազգային հերոսներու յիշատակովը, մեծ աստուածներուն ուղղուած ազերասնքովը, նախահայրերու յիշատակին ընծայուած մեծարանքովը, հայրենիքին ձօնուած զբրուատիքովը: Որովհետեւ ըմբիշին յաղթանակը հանրային յաղթութիւն մըն էր եւ բանաստեղծին ոտանաւորներն անոր մասնակից կ'ընէին ոտանը եւ անոր բոլոր աստուածային պաշտպանները: Այդ մեծ պատկերներով պաշարուած, իրենց կատարած դերովն իսկ աւելնոտած, այն ծայրագոյն վիճակին կը հասնէին զոր խանդավառութիւն (enthousiasme) կը կոչէին, այդ բառով յոյց տալով թէ աստուածը իրենց մէջ կը զգային. եւ իրօք աստուածը իրենց մէջ կ'իջնէր. որովհետեւ ան մարդու մէջ կը մտնէ, երբ մարդ կը զգայ իր ուժին ու աղնուութեանը տարապայմանօրէն մեծնալը, համադաշնակ կորովովն ու համակիր հրճուանքովը ամբողջ այն խումբին որուն հետ կը գործէ:

Այսօր Պինդարի բանաստեղծութիւնը այլ եւս չենք հասկնար, շատ տեղական է ան եւ շատ մասնաւոր. շատ լեցուն է գաղտնիմաստներով, շատ կցկտուր, շատ Չ. Դարու յոյն ըմբիշներու համար յօրինուած. ոտանաւորները որ իրմէ կը մնան, իր գործին մէկ հատակոտորն են միայն. չեչտը, միմիքը. երգը, նուազարաններու հնչիւնները, տեսարանը, պարը, հանդիսախումբը եւ դեռ քսան լրացուցիչներ, որոնք աստուած չափ կարեւոր էին, կորած են: Շատ մեծ դժուարութեամբ կրնանք ըմբռնել այդ թարմ մտքերը որոնք չէին կարողացած, որոնք վերացական գաղափարներ չէին ունեցած, որոնց մէջ ամէն մտածում պատկեր մըն էր, որոնց մէջ ամէն բառ զունագեղ ձեւեր կ'արթնցնէր, գիմնաշխոնի եւ ընթացարանի յիշատակներ, տաճարներ, բնանկարներ, փողփողուն ծովու. ափուլներ, ժողովուրդ մը համակ կենդանի ղէմքերու, աւ-

տուածային՝ ինչպէս Հոմերի օրերուն , թերեւս աւելի աստուածային : Եւ սակայն , հեռուէ հեռու , շեշտ մը կը լսենք այդ թրթռուն ձայներէն . կը տեսնենք՝ կարծես փայլակի մը մէջ՝ վեհաշուք կեցուածքը դափնեպսակ երիտասարդին (Պինդարոս , Պիւթեան տաղ , Դ . , Իսթմեան տաղ , Ե .) , որ պարախումբէն կ'անջատուի Յասոնի խօսքերը կամ Հերակլէսի ուխտը արտասանելու համար . կը գուշակենք իր կարճ ժեսթը , բազուկներուն տարածումը , լայն մկանունքները որ կուրծքին վրայ կ'ուռին . հոս ու հոն կը վերագտնենք ծուէն մը բանաստեղծական ծիրանիէն , այնքան վառ որքան Պոմպէիի մէջ դեռ երէկ հողէն հանուած նկար մը :

Երբեմն , պարագլուխն է որ կը յառաջանայ . «Ինչպէս հայր մը որ վեհանձն ձեռքով մը բռնելով ոսկեձոյլ բաժակ մը , գոհա՛րն իր դանձարանին եւ զա՛րզն իր խնջոյքներուն , զայն կը մատուցանէ՛ որթետունկին ցօղովը համակ փրփրագին՝ իր ազջկանը դեռատի ամուսնոյն , այնպէս ալ ես կ'ընծայեմ՝ դափնեպսակ ըմբիշներուն հեղուկ նեկտար մը , մուսաներուն այդ պարգեւը , եւ մտածմանս անուշահոտ պտուղներովը Ոլիմպիոյ եւ Պիթոյի յաղթականները կը հրճուեցնեմ : »

Մերթ պարախումբը՝ կանգ առած , յետոյ՝ փոխնիփոխ՝ կէս-պարախումբեր , աստիճանական ուժգնացումով կ'ընդլայնեն թաւայուն ու յաղթերգակ գեղօնին շքեղ հնչականութիւնները . «Երկրիս վրայ եւ անդուսպ Ովկիանին մէջ , այն էակները զոր Արամազդ չսիրեց՝ Պիերիդեանց ձայնը կ'ատեն : Այդպէս է Խիփոնը , աստուածներու այդ թշնամին , հարիւրգլխանի հրէշը , որ քստմնատեսիլ Տարտարոսին մէջ կը փռուի Սիկիլիան անոր թաւարժի կուրծքը կը սեղմէ . սիւն մը որ մինչեւ երկինք կը բարձրանայ , ձիւնոտ Եդնան , դժնդակ ձմեռներու յաւիտենական դայեակ , անոր ճիգը կը ղսպէ . . . եւ իր վիհերէն կը ժայթքէ անմատոյց կրակի շլացուցիչ ուղիներ : Ըորեկը , անոնց անուակները կարմրորակ մուխի հեղեղ մը կը բարձրացնեն . գիշերուան ժամերուն , յորձանուտ կարմիր բոցը ժայռեր կը նետէ ծովին մէջ մեծ ժխորով , ու հրաշալիք մըն է տեսնել այդ զարմանահրաշ զեռունը , բարձրաբերձ կատարներուն ներքեւ կապկպուած , Եդնային սեւ անտառներուն տակ , կարմրելով այն շղթաներուն ներքեւ . որ իր ամբողջ գետինն ի վար պառկած կոնակը կը փորեն ու կը խթեն : »

Պատկերներու հոսումը հետզհետէ կը յորդանայ , ամէն մէկ քայլին կտրուած՝ անակնկալ յայտքերով , վերադարձութիւններով , յանկարծական ցնցմունքներով , որոնց յանդգնութիւնն ու անազնութիւնը ոչ մէկ թարգմանութեամբ կարելի չէ արտայայտել : Պարզ է թէ այդ Յոյները , իրենց արձակին մէջ ա՛յնքան ժուժկալ ու լուսաւոր , քնարերգական ներշնչման ու յիմարութեան մէջ կը գրնուինային՝ ամէն չափէ դուրս կ'ելլէին : Ասոնք չափազանցութիւններ են , անհամեմատական մեր բթացած գործարաններուն ու մեր խորհրդածական քաղաքակրթութեան հետ : Սակայն անոնցմէ բաւական բան կը գուշակենք՝ հասկնալու համար թէ այդպիսի մտաւոր զարգացում մը ինչե՛ր կրնայ ընձեռել մարդկային մարմինը պատկերացնող արուեստներուն : — Ան մարդը կը կազմէ պարախումբին միջոցովը . անոր կ'ուսուցանէ կեցուածքները , շարժումները , ճարտարապետական գործողութիւնը , զայն կը գնէ խումբի մը մէջ որ շարժուն հարթաքանդակ մըն է . իր ամբողջ ուժը կը գործածէ՝ զայն ինքնաբեր դերասան մը ընելու , որ եռանդով ու իր հաճոյքին համար կը ներկայացնէ , որ ինքզինքը դերասան կը դարձնէ իրեն իսկ համար , որ քաղքենիին խորխտութիւնը , լրջութիւնն ու պարզ արժանապատուութիւնը կը փոխադրէ ձեւարարին շրջաբերութիւններուն եւ պարողին միմիքին մէջ : Պարարուեստը քանդակագործութեան տուած է իր կեցուածքները , իր , շարժումները , էր ծալիծալ զգեստները , իր խումբերը . Պարթենոնի «Փրիդ»ին գլխաւոր նիւթը Համաթենական Տօսերու տողանցութիւնն է , եւ Պիւսոսեան տօնն է որ Փիգալիոյ եւ Պուտրուսի քանդակագործութիւնները թելադրած է :

ԻԲԲՈՒԷԻ ԹԷՆ

ԷՐՆԷՍԹ ՌԸՆԱՆ

(Շար .)



Իր ոճը դժայելի շնորհ մը եւ թարմութիւն մը ստացաւ եւ իր բոլոր կարողութեանց լիակատար զարգացմանը մէջ է որ ձեռք զարկաւ այն մեծ գործին որ իր կեանքէն քսան տարի պիտի գրաւէր, այսինքն «Քրիստոնէութեան ծագումին»։ Անոր առաջին հատորը, «Յիսուսի կեանքը», գրեց ճամբորդութեան մը միջոցին զոր կատարեց ի Փիւնիկէ (1860-61), ուր հնագիտական առաքելութեամբ մը զրկուած էր Կալիւլիայի մէջ յղացաւ զայն, նոյն խկ այն բնանկարներուն առջեւ զոր Յիսուս տեսած էր, եւ զայն խմբագրեց իր Հանրիէթ քրոջը շօտը որ իրեն բնկերացած էր եւ որ իր քովը մեռաւ, 1861 սեպ. 24ին, Ամսթիմի մէջ, ժանտատանդի նոպայէ մը զղեանուած։ Ռընան իր քրոջը յիշատակին նուիրած է գրքոյկ մը «Հանրիէթ քոյրս» տիտղոսով, նախ միայն հարիւր օրինակ սպուած, որ իր մահէն յետոյ հասարակութեան մասշէլի դարձաւ եւ որ զգացման խորութեամբն ու մաքրութեամբ ինչպէս եւ ձեւին գեղեցկութեամբ՝ թերեւ իր հրաշակերան է։

Փիւնիկէէն վերադարձին երբայցեցերէնի, քաղզերէնի եւ ասորերէնի ուսուցիչ կարգուեցաւ Քոլէժ տը Ֆրանսին մէջ (1852, յունուար)։ Բայց իր առաջին դասը, ուր Յիսուսը «անբաղդատելի մարդ մը» կ'անուանէր, կղերականներու եւ հակակղերականներու կողմէ թոռն ցոյցեր յարուցած ըլլալով (փետ. 21), դասընթացքը զարկեցուցին եւ երկու տարի յետոյ ջնջեցին։ Այդ միջոցին, «Յիսուսի կեանք»ին հրատարակումը (23 յունիս 1863) զինքը Ներոպայն ամենէն հռչակաւոր մարդերէն մին ըրած էր։ Այս գողտրիկ վերքը առաջին փորձն էր որով անձ մը հին բնագիտական վրայ յենլով, կ'ուզէր վերակազմել գիմաղձութիւնը Յիսուսին զայն նկատելով իբրեւ պատմական անձ մը, եւ այն միջավայրը ուր Յիսուս ապրեցաւ։ Եւ իբրեւ հնապէս եւ արուեստագէտ՝ Յիսուսի մէջ ի վեր հանելով հանգերձ երկրի մը եւ ժամանակի մը մարդը Ռընան մատնանիչ կ'ընէ, իբրեւ իմաստասէր՝ ինչ որ անոր բարոյականին մէջ կայ յաւիտենականապէս ճշմարիտ։ «Քրիստոնէութեան ծագում»ին Բ. հատորին, «Առաքեալներուն մէջ, կը ջանայ բացատրել Քրիստոսի յարութեան հաւատքը, որուն մէջ սիրոյ հոգեւորականութիւնը կը տեսնէ։ Երրորդ հատորը, «Ս. Պօղոս»ը, գրելու համար, նոր ճամբորդութիւն մը ըրաւ Արեւելք (1864-65), անձս մը տեսնելու համար այն տեղերը ուրկից անցած էր Առաքեալը. իր այդ գործին մէջ կը վերլուծէ հոռմէական պետութեան բարոյական եւ բնկերական վիճակը եւ առաքեալին նկարագրը, ցոյց տալու համար թէ ինչպէս Պօղոս, զործող մարդը, կենսունակ դարձուցած է այն-

կրօնքը զոր Յիսուս երազեց, եւ թէ ինչպէս իր հրավառ հաւատքը յաղթած է միանգամայն Հրէաներու ծիսական անձկամտութեանը որ կարող էր նոր կրօնքին տարածումն արգելել, եւ անսարքերակեպտութեանը հեթանոսներուն որոնց նիւթական հանգստութիւնն ու բարօրութիւնը կայսերական վարչութեան շնորհիւ ապահովուած էին, բայց որոնց բարոյական պէտքերը չէին կրնար բազմաստուածութեան մէջ գոհացում գտնել։ Միեւնոյն ատեն կը նշանակէ հոն կոիւր կեանքի բարոյական ու կրօնական նոր ըմբռնումին, զոր Յուդայի երկիրը պիտի տիրական դարձնէր Ներոպայի մէջ, եւ այն կեանքի արուեստագիտական ըմբռնումին միջեւ զոր Յուստատանը ունեցած էր։

1869ին. Ռընան, «Ս. Պօղոս»ը աւարտած եւ հրատարակած ըլլալով, իբրեւ ազատական հակակողմին բնարեւի Աէն-է-Մարնի երեսփոխանական ընտրութեանց ներկայացաւ եւ չյաջողեցաւ։ Յաջորդ երկու ասիները, Պատերազմը եւ Քոմիւնը, իր մտքին մէջ ինչպէս երբեմն 48ին յաջորդող հակաղղեցութիւնը խորունկ յեղաշրջութիւն մը յառաջ բերին. ըմբռնեց թէ բանականութեան եւ պարտականութեան տիրապետումը զիւ իր կարծած կ'ընչաւ անկի հետեւ էր այն յիմարութիւնը, բարբարոսութիւնը, անբարոյական քրտութիւնը որ զիւ կը մնար ամենէն քաղաքակիրթ ժողովուրդներուն, Գերմանացիին ինչպէս Ֆրանսացիին մէջ, բայց ի բայ իր աչքին երեւցաւ մարդկային բնութեան ճակատագրական անկատարութիւնները չէին ստիպեր արդեօք մարդս մտածելու թէ յառաջգիւմութիւնը ցնորք մըն է։ Կրօնական պատմութեան իր ուսումնասիրութիւններն բնոյհասեց եւ Ֆրանսացի առաջարկեց «Մտաւորական եւ բարոյական բարենորոգում» տիտղոսով գրքի մը մէջ, վերակազմութեան յատակադիմ մը, եւ «Իմաստասիրական տրամախօսութիւններ»ուն մէջ (1871ին գրուած, բայց հինգ տարի յետոյ սպուած) իր իմաստասիրական խոստովանանքը ըրաւ։ «Մտաւորական եւ բարոյական բարենորոգումին» մէջ, կը մերժէ ուսակալութեան կազմակերպութիւնը որ ֆրանսական Յեղափոխութեան արդիւնքն էր եղած եւ որուն զատապարտութիւնը կը թուին իրեն Պատերազմը եւ Քոմիւնը. ինքը կ'ուզէ Ֆրանսան վերակազմել ազնուապետական կազապարի մը մէջ, անոր գլուխը դնելով բարձր մտքով հատընտիր մարդիկ որոնք իրենց դիրքին շնորհիւ չահախնդիր փորձութիւններէ կարենան զերծ մնալ. նոր ձեւի մը տակ, այն նոյն երազն է զոր 1848ին յղացած էր, եւ որով կը բաղձար տեսնել բարոյական ու մտաւորական բարձր գաս մը ազդը կատալաբելու գործը իր ձեռքն առած։

ՊԵՐՔԸԼՈ

(Շարունակելի)

Պ Ա Տ Ո Ւ Ռ Յ Ա Տ Ե Ա Ն Ը

— 0 —

Պատուոյ ատեանը, որուն կազմութիւնը պահանջած էր, քննեց պ. պ. Քալբաքճեանի եւ Քայաեանի ամբաստանութիւններն ինծի դէմ, եւ տուաւ իր վճիռը, որ, բնականաբար, կը յայտարարէ թէ այդ ամբաստանութիւնները ո եւ է ապացոյցի վրայ չեն հիմնուիր:

Հոս երկու բառով կ'ուզեմ պարզել այն պարագաները որոնք հարկաւոր դարձուցին պատուոյ ատեանի կազմուիլը:

Իր անդամներու թիւը բազմապատկելու համար Հայկական Միութեան անօրէն ժողովը որոշեց շրջաբերական մը գրկել բարիդասնակ կարգ մը Հայերու ինչպէս եւ ուրիշ ներկիրներ պտնուող խումբ մը ազգայիններու, բացառելով Միութեան նպատակը եւ հրաւիրելով անդամակցութեան: Այդ շրջաբերականին ներքեւ հետեւեալ ծանօթութիւնը գրուեցաւ՝ անօրէն ժողովին միաձայն հաւանութեամբ: «Առէն թղթակցութիւն ուղղել Միութեան աստեապետ պ. Յ. Իսքէնտէրի կամ ատենադպիր պ. Ա. Չօպանեանին»: Այն նիստին մէջ ուր այս սրտումը տրուեցաւ, փափաք յայտնողներ եղան (եւ պ. Իսքէնտէր ու ես անոնցմէ էինք) որ զրամական ուղարկներուն համար գանձապահին հասցէն նշանակուէր. բայց պ. Գ. Փրիտոնոֆ, գտնձապահը, մեկնած էր Բարիզէն առանց ո եւ է հրահանգ թողլու այդ մասին, եւ պ. Թամամչեֆ զոր անօրէն ժողովը իր ուրոշմամբ փոխ-գանձապահ կարգած էր մինչեւ պ. Փրիտոնոֆի վերադարձը, չընդունեցաւ որ իր հասցէն նշանակուի՝ քանի որ պ. Փրիտոնոֆ զինքը չէր արտօնած հրապարակաւ այդ փոխանորդութիւնը ստանձնելու. այս պայմաններուն մէջ, այդ նստին ներկայ եղող բոլոր անդամները համաձայնեցան որ կը բաւէր ատենապետին եւ ատենադպրին հասցէն տալ ինչպէս արդէն կ'ընեն ո եւ է ընկերութեան մէջ:

Յաջորդ նստին, պ. Թամամչեֆ յայտարարեց թէ Միութեան վերջին նստին մէջ անցած խօսակցութիւնը դուրսը տարածուած էր, Միութեան շրջաբերականին օրինակը հրապարակելուէ առաջ՝ անօրէն ժողովին չվերաբերող անձերու ձեռքը անցած էր, եւ առաջարկեց քննութիւն մը բանալ՝ գիտնալու համար թէ որոնք են այն անձերը որ անօրէն ժողովին ներքին գործերը կը մատնէին օտարներու: Խնդրեցինք պ. Թամամչեֆէն մեզի բացատրել թէ ի՞նչ առիթով այդ տեղեկութիւնն ունեցած էր, պ. Թամամչեֆ յայտնեց թէ պ. պ. Քալբաքճեան եւ Քայաեան, շրջաբերականին մէկ օրինակը ձեռքերնին ունենալով, անօրէն ժողովին նախորդ նստին մէջ տեղի ունեցած խօսակցութեանց տեղեակ, դացած էին տեսնել պ. պ. Թամամչեֆին եւ կամպարոֆը եւ զանոնք հրաւիրած էին թոյլ չտալ որ այդ շրջաբերակ ինններքեւ պ. Իսքէնտէրի եւ իմ հասցէն գրուէր, որովհետեւ՝ ըստ իրենց՝ պ. Իսքէնտէրի եւ իմ անունս վստահութիւն ներշնչող անուններ չեն եղեր: Պ. պ. Թամամչեֆ եւ կամպարոֆ, շատ քաղաքավար, չհամարձակեցան մեզի կրկնել այն զրպարտութիւնները որով պ. պ. Քալբաքճեան եւ Քայաեան իրենց այդ դատումը հաստատել փորձած էին: Մենք պահանջեցինք որ մէն բան յայտնեն, այն ատեն մէկ քանի բառով բացատրեցին այն յիմար մեղադրանքները զոր այդ պարոնները կ'ուղղէին ինծի եւ պ. Իսքէնտէրին (պ. պ. Քալբաքճեան եւ Քայաեան չէին շատացած զիս անօրինարկել ճգնելով, պ. Իսքէնտէրի անունն ալ մրտաւր փորձած էին): Իսկոյն խնդրեցի պ. պ. Թամամչեֆէն եւ կամպարոֆէն որ պատուոյ ատեան մը կազմեն, իրենք դատաւոր հանդիսանան (քանի որ իրենց ուղղուած էին երկու զրպարտիչները), եւ հըրաւիրեն այդ երկու պարոնները ապացոյցակեղ իրենց հեքեաթները: Այս պահանջը կ'ընէի, ոչ թէ որովհետեւ երկու աննշան անհասներու

զրպարտութիւններէն ո եւ է կերպով անունս աղօտած կը նկատէի(*) , այլ որպէսզի պատուոյ ատեանի մը միջոցով հանդիսաւորապէս երեւան հանելով երկու զրպարտիչներու սեւ հողերանութիւնը , դաս մը տուած ըլլայի բոլոր անոնց որ ատենէ մը ի վեր իրենց սիստեմ ըրած են զրպարտութեան աղտոտ միջոցին զիմել անձիմը գործունէութեանը խոչընդոտ կանգնելու համար՝ երբ ուրիշ կերպով չեն կրնար իրենց նախանձին ու ատելութեանը յազուրդ տալ . պատուոյ ատեանը , իմ մտքիս մէջ , պիտի ըլլար դարմաններ , մաքրելու համար մեր բարքերը՝ այդ վտանգաւոր ախտէն որ վերջերս խոսովիչ տարածում մը ստացաւ մեր մէջ : Պ. Իսքէնտէր հաճեցաւ մասնակցիլ այս մաքրագործումի ձանձրացուցիչ ու վեհանձն ջանքին :

Պահանջեցինք պ. պ. Քալբաքճեանէն եւ Գայանէն գրաւորապէս բանաձեւել իրենց ամբաստանութիւնները : Պ. պ. Քալբաքճեան եւ Գայանէն համաձայնեցան մեր պայմաններուն , եւ հաւանեցան պ. պ. Թամազեֆին ու Կամպարոֆը ընդունիլ իբրեւ դատաւոր : Ամէն պատուոյ ատեանի մէջ , զրպարտեալ անձը իր կողմէն զինքը շատոնց ի վեր ճանչցող եւ միանգամայն հանրային վստահութիւնը վայելող անձ մը կ'ընտրէ իբրեւ դատաւոր , ամբաստանիչն ալ իր կողմէն նոյն պայմանները լրացնող անձ մը , եւ այդ երկու անձերն երրորդ մը կ'ընտրեն : Պ. Իսքէնտէր եւ ես դատաւոր կարգեցինք պ. պ. Թամազեֆին ու Կամպարոֆը՝ ոչ թէ իբրեւ մեր կողմէն դատաւորներ , (քանի որ իրենք մեզ շատ քիչ կը ճանչնային եւ իրենք ալ մեզի քիչ ծանօթ էին) , այլ իբրեւ ճիշդ այն երկու անձերը զորոնք պ. պ. Քալբաքճեան եւ Գայանէն իրենք իսկ առաջուց իրենց դատաւոր ընտրած էին , անոնց զիմելով (իբրեւ , ըստ իրենց , մեր տընօրէն ժողովին ամենէն վստահելի եւ յարգելի

անձերուն) այդ ժողովին ուրիշ երկու անդամներուն մասին իրենց դատումները յայտնելու համար : Պ. պ. Քալբաքճեան եւ Գայանէն , որ նախ բաւական համարած էին պ. պ. Թամազեֆին ու Կամպարոֆին իբրեւ դատաւոր , շարժ մը յետոյ կարծիքնին փոխեցին եւ պէտքը տեսան իրենց կողմէն երրորդ դատաւոր մըն ալ կարգելու : Մենք չհակառակեցանք իրենց բազմանքին իրականացման . երրորդ դատաւոր նշանակեցին պ. Մարտիկ Մինասեանը , բարիզարնակ վաճառական մը . հաւանեցանք , շատ քիչ ճանչնալով հանդերձ այդ պարունը , բայց մտածելով որ՝ ո՛վ որ ալ ըլլար դատաւոր , պիտի չկարենար մեզի աննպաստ վճիռ տալ՝ առանց արդարութիւնը կոխտեսելու :

Պ. պ. Քալբաքճեան եւ Գայանէն իրենց այս ընթացքով գլխաւոր նպատակ ունէին երկպառակութիւն ձգել Հայկական Միութեան տնօրէն ժողովին մէջ : Պ. Բրոֆ-Քալֆայեան ինծի պատմեց (եւ պատուոյ ատեանին մէջ ալ եկաւ վկայել այդ մասին) թէ պ. պ. Թամազեֆին եւ Կամպարոֆին զիմելէ առաջ իրենց զրպարտիչի դերը կատարելու համար , պ. պ. Քալբաքճեան եւ Գայանէն , երկուքն ալ անդամ ըլլալով հանդերձ Հայկական Միութեան , գաղափարն ունեցած էին ազերսագիր մը խմբագրել եւ ստորագրութիւններ հաւաքել՝ Փրանսական կառավարութեան խնդրելու համար որ Հայկական Միութեան արտօնութիւն չընտրէ : Այս մանրամասնութիւնը շատ յստակ գաղափար մը կուտայ այն զգացումներուն վրայ որ մղած էին պ. պ. Քալբաքճեանն ու Գայանէն՝ իրենց շարժաստիկան այցելութիւնը կատարելու պ. պ. Թամազեֆին եւ Կամպարոֆին մօտ :

Ահաւասիկ պ. պ. Քալբաքճեանի եւ Գայանէնի ամբաստանութիւնները պ. Իսքէնտէրի ինչպէս եւ իմ մասիս (**):

(*) Կարծողներ եղեր են թէ պ. Իսքէնտէր եւ ես մեզ ստիպուած ենք նկատել պատուոյ ատեանի զիմելու , որովհետեւ առանց ատոր պ. պ. Թամազեֆին եւ Կամպարոֆի որպէս թէ որոշած են եղեր մեզի հետ անդամակից մնալէ դարբիլ . այդպիսի բան երբեք գոյութիւն ունեցած չէ , եւ չէր կրնար գոյութիւն ունենալ : Պ. պ. Թամազեֆին ու Կամպարոֆին աշխարհիս ամենէն թեթեւօլիկ մարդիկը պիտի ըլլային եթէ օրին մէկը դաներնին զարնող երկու անձանց թիւերու պատմութիւններն իմանալով իրենց երկու անդամակիցներէն դատուելու որոշումը տալու ելլէին . այնչափ այդ բանը գոյութիւն չունէր որ այն նստին մէջ ուր պ. Իսքէնտէրն ու ես պատ-

ուոյ ատեանի կազմութիւնը որոշեցինք , միաձայն հաւանութեամբ որոշուեցաւ նաեւ որ Հայկական Միութեան տնօրէն ժողովի նիստերը պիտի շարունակուէին . եւ այդ նիստերն այն ատեն միայն ընդհատուեցան երբ պ. Իսքէնտէր անձնապիս փախաւ յայտնեց որ ընդհատուէին մինչեւ պատուոյ ատեանին փակուածը : Եւ պատուոյ ատեանին փակումէն յետոյ , նիստերը վերսկսան ըստ առաջնոյն :

(**) Ամբաստանագիրը , ինչպէս եւ վճռագիրը , շարագրուած են ֆրանսերէն լեզուով . այստեղ կը հրատարակենք հայերէն բառական թարգմանութիւնը :

Քարիզ 3 յունիս 1901

Պ. պ. Թամամչէֆի եւ Կամպարոֆի,

Պարոններ,

Այն խոստման համեմատ զոր ձեզ ըրինք մայիս 28ի օրը, կը փութանք մեր ամբաստանութիւնները գրաւորապէս բանաձեւել հեւ տեւեալ տողերուն մէջ: Բայց մեր ամբաստանութիւնները պարզելէ առաջ, կ'ուզենք անգամ մը եւս կրկնել թէ մեզ այս յայտնութիւններն ընելու մղող բունն բաղձանքը, պարոններ, ձեզի պէս բարի զիտաւորութիւններով տոգորուած անձերու միտքը լուսաւորել է, յետոյ՝ եւ մանաւանդ՝ հանրային գործերու վարչութիւնը արժանի եւ մեր հայրենակիցներու մեծամասնութեան վստահութիւն ներշնչող անձերու յանձնուած տեսնելն է:

Արդ, ցաւով նկատեցիրք թէ այն ընկերութեան մէջ որ վերջերս կազմուեցաւ ձեր նախաձեռնութեամբ, կը գտնուին պ. պ. Իսքէնտէրի եւ Զօպանեանի պէս անձեր որոնք զբժարազարար պէտք եղածին չափ չեն լրացներ պարկեշտութեան (probité) պայմանները եւ որոնց վրայ հետեւեալ ջախջախիչ ամբաստանութիւնները կը ծանրանան:

Ա. — Ամբաստանութիւններ պ. Իսքէնտէրի գէմ:

1. պարբերաբար շատ տարիներէ ի վեր, անդամավճարներ եւ հանդանակութիւններ հաւաքուած են պ. Իսքէնտէրի անունով, որոնց մասին երբեք հաշիւ չէ տուած ազդին:

2. պ. Իսքէնտէր իր անունը վտանգեց՝ իր պաշտպանութիւնը շնորհելով խաչադողական շահատակութեան մը որ կողկասի մէջ կատարուած է եւ որուն մասին երբեք գոհացուցիչ բացատրութիւն մը չենք ունեցած:

3. պ. Իսքէնտէր ձեր վստահութիւնը բացէ ի բաց չարաչար գործածեց՝ նոր ընկերութեան կազմակերպումին համար ժողովքի հրաւիրելով միմիայն իր արբանեակներէն եւ իր խնկարկուներէն շատերը, այսպէս՝ անգամ մը եւս կասկածի տակ գնելով հանրային կարծիքին առջեւ իր անկեղծութիւնն ու անկողմնակալութիւնը:

4. Այս ամբաստանական իրողութիւններէն յետոյ կը տեղեկացնենք ձեզ թէ հայ բարերար մը, իմացած ըլլալով պ. Իսքէնտէրի ներկայութիւնը անօրէն ժողովին մէջ, ընկերութեան կարեւոր գումար մը նուիրելու որոշումէն կտկեցած է. բան մը ա՛յնքան աւելի ցաւալի որ ընկերութեան առաջին քայլէն իսկ կը պատահի, ինչ որ մեզի հնթադրել կուտայ անդամ մը եւս թէ, ցորքան պ. Իսքէնտէր տնօրէն ժողովին անդամ մնայ, ընկերութիւնը պիտի չյաջողի հանրային վստահութիւնը գրաւելու:

Ահա. ասիկ, պարոններ, համառօտիւ, այն ամբաստանութիւնները զոր կ'ուզենք պ. Իսքէնտէրին կը փութանք աւելցնել թէ պատ-

րաստ ենք վկայութիւններով եւ փաստերով ապացուցանել ամէն ինչ որ այս տողերուն մէջ կը յայտնենք:

Բ. — Ամբաստանութիւններ պ. Զօպանեանի գէմ:

1. Պ. Զօպանեան, բռնաբարելով մանկամարդ հայ աղջիկ մը որ իր դրողմովը Բարիզ եկած էր, զայն անպատուութեան ու թշուառութեան մատնած է:

2. Բաւական կարեւոր գումար մը շորթած է նուպար Փաշայէն, գրքի մը անպարտութեան ծախքերը չափազանցելով:

3. Խնկարկութիւններն ու շողոքորթութիւնները զոր ոչ մէկ պարագայի մէջ չի խնայեր ջողերուն ու հարուստներուն, իրեն ի նպաստ եղած պարբերական հանդանակութիւնները, իր քաղաքական կարծիքներուն մշտական փոփոխութիւնը, յստակօրէն ցոյց կուտան մեզի թէ պ. Զօպանեան ազգային խնդիրը կը շահագործէ:

Ահա. ասիկ, Պարոններ, համառօտիւ, այն ամբաստանութիւնները զոր կ'ուզենք պ. Զօպանեանի գէմ. կը փութանք աւելցնել թէ պատրաստ ենք ապացուցանել՝ վկայութիւններով եւ փաստերով՝ ամէն ինչ որ այս տողերուն մէջ կը յայտնենք:»

Պէտք է զիտել տամ որ այս ամբաստանագիրը շարադրուած ատեն, երկու զրպարտիչները արդէն ջնջած էին մին այն ամբաստանութիւններէն որոնց մասին խօսած էին պ. պ. Թամամչէֆին եւ Կամպարոֆին՝ անոնց հետ իրենց ունեցած տեսակցութեանը մէջ, — այն է՝ Վոսվիլի Յերեկոյթին հասոյթէն մաւ մը լուրացուցած ըլլալու գրոյցը: Այսքան ծանր ու յստակ ամբաստանութիւն մը խօսակցութեան մը մէջ երեւան հանել եւ պատուոյ առեանը կազմուելուն պէս՝ զայն ջնջել, — ասի արդէն բաւական լուսաւոր գաղափար մը կուտայ այդ երկու պարոններուն լրջութեանը վրայ:

Ահա պատուոյ ատեանի վճիռը՝ այն ամբաստանութեանց մասին զոր պ. պ. Քալբաքճեան եւ Քայանեան ուղղած էին ինծի գէմ:

«Մենք իրաւտարար-գատաւորներ, ընտրուած պ. պ. Քալբաքճեանի, Քայանեանի, Զօպանեանի կողմէ՝ մեր կարծիքը յայտնելու համար պ. Զօպանեանի գէմ պ. պ. Քալբաքճեանի եւ Քայանեանի ամբաստանութեանց մասին, յունիս 16ի եւ 18ի երկու նիստերուն մէջ ունկնդրելէ յետոյ, երկու կողման եւ իրենց վկաներուն

յայտարարութիւնները, եւ քննելէ յետոյ յիշեալ երկու կողմերէն ներկայացուած նամակներն եւ ուրիշ սոքիւմանները,

Կը յայտարարենք, երկու ձայնի մեծամասնութեամբ՝ մէկ ձայնի դէմ,

1. Թէ այն իրողութիւնները որ կը մեղադրուին պ. Զօպանեանին եւ կը նկրտին հաստատել թէ ան «բռնաբարած է մանկամարդ հայ աղջիկ մը որ իր զրդումով Բարիբեկած է եւ զայն անպատուութեան ու թշուառութեան մատնած է», չեն ապացուցուած, եւ իբր պոճ ցոյց արուած օրիորդին պատիւը անեղծ է.

2. Թէ այն իրողութիւնները որոնք կը վերաբերին պ. Զօպանեանի դէմ ուղղուած այն ամբաստանութեան թէ «բաւական կարեւոր գումար մը շորթած է Նուպար Փաշայէն» «Ձէյթուն» գրքին սպազրութեան ծախքերը չափազանցելով, նմանապէս չեն ապացուցուած, հակառակ քիչ կարեւոր տարբերութեան մը ընդ մէջ այն գումարին զոր պ. Զօպանեան ինքն իսկ կ'ընդունի Նուպար Փաշայէն ստացած ըլլալ եւ «Մերքիւր տը Ծրանս»ի գրավաճառանոցին հաշուեցոյցին մէջ նշանակուած տպագրութեան ծախքին, բայց թէ այդ հաշուեցոյցը եւ ուրիշ հաշիւներ զոր պ. Զօպանեան ներկայացուց, ցոյց կուտան թէ այս պարագայի մէջ պ. Զօպանեան կրնար աւելի պատշաճօրէն (correctement) շարժիլ՝ գրավաճառանոցին հետ իր ունեցած մասնաւոր հաշիւները «Ձէյթուն» գրքին հաշիւներուն հետ չխառնելով, ինչ որ գրքին սարածմանը վնաս պատճառած է:

3. Թէ այն իրողութիւնները, որոնք կը վերաբերին ազգը շահագործելու խնդրոյն, ինչպէս եւ օտար կառավարութեան մը վարչութեանը հետ պարսակելի թղթակցութեան մը խնդրոյն (*), չեն ապացուցուած:

Իրաւարար-դատարանէ՛ր՝ Գ. ԿԱՄՊԱՐՈՅ
Մ. ԹԱՄԱՄՇԵՅ
Մ. ՄԻՆԱՍԵԱՆ

(*) Այս հարցը, որուն համեմատ Ռուսիոյ հանրային կրթութեան նախարարին նամակ մը գրած եմ եղեր՝ զաղտնի ծառայութիւններ մատուցանել առաջարկելով, ամբաստանադրին մէջ չէր նշանակուած, եւ պատուոյ ատեանին մէջ յանկարծակի կրեւան հանեցին. բայց ատիարգելք չեղաւ որ երկրորդ նստին մէջ ապացուցանէի՝ փաստերով, այդ ամբաստանութեան կատակերգական ապուշութիւնը:

(Ստորեւ՝ երրորդ դատարարին անձնական կարծիքը, որ գոհար մըն է:)

Սաաջին ամբաստանութիւն. — Այո՛, միայն թէ բռնաբարումը ապացուցուած չէ.

Երկրորդ ամբաստանութիւն. — Տպագրութեան խնդրոյն մէջ, 236 (?) ֆրանքի գումարի մը չափազանցութիւնը. ինչպէս եւ ուրիշ շատ մը զեղծումներ(?) ապացուցուած են:

Երրորդ ամբաստանութիւն. — Այո՛, բայց ապացուցուած չէ առ ի չդոյն ուղղակի վկայութեան(?):

Մ. ՄԻՆԱՍԵԱՆ

Ձէյթունի գրքին հաշիւը իմ միւս գրքերու հաշուոյն խառնած ըլլալու մասին վճռին մէջ նշանակուած դիտողութիւնը պիտի գոյութիւն չունենար եթէ դատարարները՝ առաջարկութիւնս ընդունելով՝ «Մերքիւր տը Ծրանս»ի հրատարակչական ընկերութեան վարիչ եւ «Մերքիւր տը Ծրանս» ամսագրին անօրէն պ. Վալէթին առաջուց ունկնդրած եւ այդ գրքին հեղինակ պ. Աղասին հետ զիս երեսած ըլլային, ներկայացուցի պ. Վալէթին որ այդ դիտողութեան անճշտութիւնը հաստատեց նամակով մը զոր կը հրատարակեմ ստորեւ. ս. պ. Թամամչէֆ ու Կամպարոֆ, այդ նամակը կարգաւով, ինծի յայտարարեցին թէ թէ պ. Վալէթի բացատրութիւններէն յետոյ՝ իրենց այդ դիտողութիւնը (որ արդէն ո եւ է անճշտութիւն չունէր պ. պ. Քալլաքճեանի եւ Կայանեանի որոշ ամբաստանութեան հետ) իր նշանակութիւնը կը կորսնցնէր, եւ խընդրեցին որ վճռին հետ հրատարակեմ այդ նամակը:

Ահա այդ նամակը, որ ուղղուած է ինծի,

Բարիգ, 29 յունիս 1901

Սիրելի պարոն,

Այս վայրկեանիս կարգացի իրաւարար ատեանի վճռագիրը զոր հաճած էիք ինծի հաղորդել: Կը գարմանաւ որ մեր ընթացքը ո եւ է կատկած ներշնչած ըլլայ:

Լաւ չեմ հասկնար երկրորդ հատուածը, եւ չեմ ըմբռնիր քե ի՛նչպէս կրեւայիս աւելի պատշաճօրէն (correctement) շարժիլ: Ես չէի անգիտանար թէ գրքին սպազրութեան ծախքերը Նուպար Փաշայի կողմէ պիտի վճարուէին եւ թէ հեղինակն էր պ. Աղասի. բայց ես ձեզի միայն կարող էի հաշիւ տալ, քանի որ սկիզբէն ի վեր միմիայն ձեզի հետ գործ ունեցած եմ: Արդէն, մէկ քանի անգամ գրքին հրատարակման միջոցին, տեսայ պ. Աղասին, եւ սակայն ոչ մէկ առիթով ինքը փափաք չյայտնեց

որ «Ձէյթուն»ի հաշիւը իր անունին բանամ : Այդ հաշիւը արդէն ո եւ է առնչութիւն չունի գրքին տարածմանը հետ : Հատորը ուղարկուեցաւ, լոյս տեսնելուն պէս, եւ ցուցակի մը համեմատ զոր դուք ինծի յանձնեցիք, ֆըրանսացի ու անգլիացի շատ բազմաթիւ անձնաւորութեանց, ծերակուտականներ, երեսփոխաններ, ակադեմիականներ, խմբագիրներ, եւն : Քանի քանի անգամ նոր ցուցակներ բերիք մեզի, եւ պ. Աղասի ինքն իսկ մէկ քանի հեղ ներկայացաւ ձեր այցաքարտովը եւ իրեն տուինք այնքան հատոր որքան ուզեց : Մէկ խօսքով, այդ գիրքը ցրուեցաւ ինչպէս փրօփականտի հրատարակութիւն մը :

Քանի որ առիթը կը գտնուի, պէտք է ձեզի խնդրանք մը ներկայացնեմ : Այլեւս բանի մը չեն ծառայեր «Ձէյթուն»ի այն օրինակները որ մեր քով կը մնան ա՛յլ բնաւ ծախած չունինք անոնցմէ : Եթէ կարենայիք զանոնք տեղ մի փոխադրել, մեզ շնորհապարտ կացուցած պիտի ըլլայիք :

Կը խնդրեմ որ հաւատարմ, սիրելի պարոն, ամենէն սրտագին զղացումներուս :

Ա. Ա. Յ. Ռ. Տ ՎԱԼԷԹ

Յ. Գ Վճռագիրը կը վերընթեռնուի, նամակ փակելէ առաջ, եւ կէտ մըն ալ ուշադրութիւնս կը գրաւէ : Բացարձակապէս անկարելի էր առաջուց ճշդել, առանց 200 ֆր. ի մօտաւորութեան մը, պատկերներ, քարտէս մը ունեցող եւ այդքան բազմաթիւ անձերու զբոհուելիք գրքի մը ծախքերու գումարը : այդ պայմաններուն մէջ ուրիշ բան չէի կրնար ընել բայց եթէ մօտաւոր գումար մը նշանահակել (*):

Ա. Վ.

Եւ ահա պատուոյ տեսանին վճիռը պ. Իսքէնտէրի դէմ ուղղուած ամբաստանութեանց մասին :

Մենք ստորագրեալքս, իրաւարար-գատաւոր ընտրուած ըլլալով պ. պ. Քալբաքճեանի, Քալբաքճեանի եւ Իսքէնտէրի կողմէ՝ մեր կարծիքը յայտնելու համար այն ամբաստանութեանց մասին զոր այդ յիշեալ երկու առաջին անձերը ուղղեցին պ. Իսքէնտէրի դէմ, յունիս 23ի օրը երկօք կողմն ի մողով գումարեցինք, ունինչրեցինք բացաւորութիւնները

(*) Մօտաւոր գումարն էր 2000 ֆրանք. հատորին տպագրութեան ծախքերը 1764 ֆրանքի հասած են : անձնաւորութեանց զբոհուած հատորներու փոստայի ծախքը 60 ֆրանք կը գտնուէ : Ընդ ամենը 1824 ֆրանք : տարբերութիւնն էր 176 ֆրանք, եւ ոչ թէ 236. ինչպէս կը գր-

զոր մեզի տաւին, քննեցինք գրութիւնները զոր մեզի ներկայացուցին : Նկատելով որ

1. — Պ. պ. Քալբաքճեան եւ Քալբաքճեան յայտարարեցին թէ իրենք իսկ ու եւ կատկած չէին ընդունել պ. Իսքէնտէրի անձնական պատուաւորութեանը մասին, թէ անոր դէմ ուղղուած չորս ամբաստանութիւններէն ինքն սրբերաբար ետ կառնէին երկուքը, որ կը վերաբերին՝ 1). Կովկասի մէջ զործուած խաչագողութեան իր շնորհած պաշտպանութեանը . 2). Բարիզի մէջ հիմնուած նոր ընկերակցութեան զլուխը գտնուելով պ. Իսքէնտէրի անոր հասուցած վնասին (*), եւ թէ կը պահպանէին միւս երկու ամբաստանութիւնները, որոնք իրենց առարկայ ունէին թէ՛ 1). պ. Իսքէնտէր երբեք հաշիւ չէ տուած ազգին՝ իր անունով կատարուած բազմաթիւ անդամաւճարներու հաւաքմանց եւ հանդանակութեանց մասին, 2) թէ Բարիզի հայկական նոր ընկերակցութեան կազմակերպումին համար միայն իր արբանեակներուն եւ խնկարկուներուն մեծ մասը հրաւիրած է .

բ. Նկատելով սակայն թէ պ. Իսքէնտէր այս վերջին ամբաստանութիւններէն բաւականաչափ ինքզինքն արդարացուցած է :

Գ՛որոշենք՝ երկու ձայնի մեծամասնութեամբ ընդդէմ մէկ ձայնի, թէ պ. Իսքէնտէրի դէմ բերուած իրողութիւնները բնաւ երբեք չեն պացուցաներ այն ամբաստանութիւնները զոր պ. պ. Քալբաքճեան եւ Քալբաքճեան բանաձեւած էին եւ թէ պ. Իսքէնտէրի պատիւը այս ամբաստանութիւններէն զերծ կը մնայ :

Իրաւարար-ղաւառներ
 Գ. ԿՍՄՊԱՐՈՅ
 Մ. ԹԱՄԱՄՇՆՅ
 Մ. ՄԻՆԱՍԵԱՆ

(Երրորդ գատաւորը հետեւեալ անձնական կարծիքը յայտնած է վճռագրին ներքեւ)

Առաջին ամբաստանութիւն . — Ազգին հաշիւ չէ տուած, ինչ որ պարտաւոր էր ընել :

Իր «առատաձեռն» պ. Մինասեանը : Աւելորդ է ըսել թէ երբ տպարանը մանրամասն հաշիւը տուաւ ինծի, նոյն օրն իսկ ներկայացուցի զայն Նուպար փաշային :

(*) Ի՛նչ կը մտածէք երկու մարդոց մասին որ իրենց ամբաստանագրին մէջ պ. Իսքէնտէրը

Երկրորդ ամբաստանութիւն. — Ամբաստանիչներուն կողմէ ետ առնուեցաւ՝ պ. Իսքէնտէրի տուած գոհացուցիչ բացատրութեանց վրայ :

Երրորդ ամբաստանութիւն. — Պ. Իսքէնտէր անկողնիակալ չէ եղած հայկական նոր ընկերութեան կազմակերպումին մէջ :

Մ. ՄԻՆԱՍԵԱՆ

Այս երկու վճիռները կը հաստատեն ինչ որ կ'ուզէի որ հաստատուէր, այսինքն թէ պ. պ. Քալբաքճեան եւ Գայտեան առանց ապացոյցի աւերասանողներ են . դատաւորներէն մին , պ. Մինասեան , այդ մասին համակարծիք չէ եղած պ. պ. Թամազէֆին եւ Կամպարոֆին : Կարելորութիւն ունեցողը պատշաճ ասեակի վճիռն է եւ ոչ թէ պ. Մինասեանին անձնական կարծիքը , որ զիս բնաւ , բայց բնաւ չի հետաքրքրեր : Վճիռը չէ ճշդած թէ ինչպէս պէտք է անուանել , ինչպէս պէտք է դատել անձի որոնք այսքան ծանր ամբաստանութիւններ կը համարձակին ընել երկու գործիչի մասին՝ առանց ո եւ է ապացոյցով զանոնք հաստատել կարենալու : Ամէն անոնք որ դատելու կարողութիւնէն զուրկ չեն , պիտի գիտնան տալ անոնց այն անունը որուն արժանի են :

Այս պատուոյ ատեանը , պ. պ. Գայտեանի եւ Քալբաքճեանի ընթացքը անկից առաջ , անոր միջոցին եւ անկից յետոյ , իրենց վկաներուն վարմունքը , եւ շատ մը պարագաներ որ այդ գործին հետ կապ ունին , ինձի յայտնեցին մեր բարձրութեան անկումին կարգ մը շատ մութ կողմերը , այնքան մութ որքան դեռ չէի կրցած երեւակայել : Խնդրոյն , — որ դեռ փակուած չէ , — այդ բոլոր մանրամասնութեանց մասին պիտի խօսիմ յաջորդ գործածի մը մէջ :

Ա. 2.

«պարկեշտութեան պայմանները պէտք եղածին չափ չլրացնող եւ իբրեւ անվատահելի մարդ ո եւ է ընկերութեան վարկին վնասակար» , հռչակելէ յետոյ , պատուոյ ատեանին մէջ՝ դեռ երկուսեք բառ մը չարտասանուած՝ կ'ելլեն յայտարարել թէ պ. Իսքէնտէրի պատուաւորութեան վրայ բնաւ կասկած չունին , եւ իրենց ամբաստանութեանց երկուքը (ամենէն ծանրերը) ետ կ'առնեն՝ միմիայն պ. Իսքէնտէրի անձնական բացատրութիւններն իմանալով առանց ո եւ է վկայի կամ զրու թեան : (Եթէ ատի բաւական էր , չէի՞ն կրնար՝ պ. Իսքէնտէրի պէս անձի մը անունը հրապարակաւ մրտաբէլէ առաջ՝ անոր հետ տեսակցութիւն մը ունենալ եւ բացատրութիւն խնդրել այսինչ կամ այնինչ խնդրոյն մասին :

Յ. Գ. — Բարեկամներէս ոմանք կը մեղադրեն զիս , — ինչպէս եւ պ. Իսքէնտէրը , — երկու չնչին անհատներու բարբառնալիքներուն դէմ արհամարհոտ լուծիւն մը պահելով շատացած չըլլալու համար : «Տեսակ մը համբաւ չինեցիք , կ'ըսեն , երկու պարոններու որոնք անմահութեան սահմանուած ըլլալէ շատ հեռու են , եւ պարապ տեղը մտաք տղմուաթ մը մէջ ուսկից՝ ինչքան ալ մաքուր ըլլայ մարդցայտք մը կը մնայ վրան : » Այս տրամաբանութիւնը այնքան անձիչ կը գտնեմ որքան անագին . եթէ մեր շնորհիւ պ. պ. Քալբաքճեան ու Գայտեան տեսակ մը նշանաւորութիւն , — Երոստրատի հռչակ մը , — ստացած պիտի ըլլան , ատոր համար ցաւելու պատճառ մը չունինք . երբ այդ երկու պարոններուն ընթացքը իր բոլոր մանրամասնութիւններովը հրապարակուի , պիտի տեսնուի թէ անոնք կ'արժեկն ճանչցուիլ իրենց շատ յատկանշական հոգեբանութեանը մէջ : Բուժելու համար այն վտանգաւոր , մահաբեր ախտը որ մեր բարձրութեան մէջ տարածուած է , « արհամարհոտ լուծութիւնը » շատ դէշ զարման մըն է : Պէտք է կր ուիլ անոր դէմ , բացէ ի բաց , ինչ զոհողութիւն ալ որ պէտք ըլլայ յանձն առնել ատոր համար , ինչ ազտութեանց ալ որ մէջ հարկ ըլլայ թաթխուիլ : Պէտք է որ մեր ժողովուրդը աւերոյցապէս , առանց ո եւ է ֆոյի , տեսնէ իր գործարանաւորութեան փտած , միբրոպալից մասերը , որոնք իր առողջութիւնը կը քայքայեն , որոնք իր զարգացմանը ամենամեծ արգելքը կը հանգրիսանան , — պէտք է որ տեսնէ , որպէս զի արժատական եւ ամբողջական մաքրագործութեան կարենայ փորձել : Այս պատուոյ ատեանը երեւան բերաւ վիթխարի այլանդակութիւններ որոնք թաքուն մնացած էին մինչև ցարդ . ապարդիւն չեղաւ ան ուրեմն :

Գալով այն նկատողութեան թէ անխոհեմ է զրպարտիչներու հետ կռիւի մտնել , որովհետեւ զրպարտուածին վրայ , — ատի զգուելի վատութիւն մըն է եւ ուրիշ ոչինչ : Ո եւ է Հայ որ երկվայրկեան մը պ. Իսքէնտէրն ու զիս կարող կարծէ մեզի վերագրուած այդ արարքները գործած ըլլալու , արժանի չէ որ իր դատումը ո եւ է կարեւորութիւն ունենայ մեզի համար : Մարդ պէտք է բազճայ յարգուիլ այն անձերէն միայն որ իրենք իսկ յարգանքի արժանի են , — եւ յարգանքի արժանի չեն անոնք որ առանց ապացոյցի ամբաստանութիւններու կը հաւատան՝ պարզապէս որովհետեւ կ'ուզեն հաւատալ :

ՀԱՅԷԶԵՐ

— 0 —

Տ Ա Ղ Ո Ղ Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Ի Բ Ե Ր Ա Ն Ո Յ Մ Ե Ռ Ե Լ Ո Յ Է Ա Ս Ա Ց Ե Ա Լ

Ո՛վ քահանայք եւ վարդապետք աստուածաբանք,
եւ ժողովուրդք հաւատացեալք ամենեքեան,
Զիմ գանդա՛տքս լսեցէք զուք միաբան,
եւ զԱստուա՛ծն աղաչեցէք ինձ փրկութեան :

Երէկ անմահ զիս զիտէի ՚ւ անապական ,
Այսօր եհաս մահու պատգամ հրաժարական ,
Թէ՛ «Ա՛յլ չունիս մասն յաշխարհէս փոփոխական ,
Ե՛կ ի տո՛ւնն յաւիտենից քու հայրական» :

Երէկ զինչ բերդ էի մարմնովս անառական ,
Այսօր հանին զիս ի տանէս իմ օթեւան .
Ի գերեզման զիս կը տանին որ է զնդան .
Այլ ճար չունիմ յետ դառնալոյ յիմ օթեւան :

Երեկ զինչ վարդ (է)ի դարդարած հոտով բուրման ,
եւ զինչ շուշան պայծառ գոյնով խիստ աննման .
Այսօր ելայ ի աշխարհէս մերկ եւ ունայն .
Միայն զպատանս ունիմ բաժին որ ինձ կուտան :

Ես խարեցայ ի յաշխարհէս պատրողական ,
եւ յաղթեցայ մեղօք՝ գերիս անզղջական .
Գործքս միայն ինձ մընացել հոգւոյ փրկան ,
Պաշար չունիմ երկար ճամբուս իմ գնացական :

Դուք մընացէք խաղաղութեամբ, ես կու գընամ,
ի յաշխարհէս զիս կը տանին մոլորական .
Խիստ անյօժար գհոգիս առին ՚ւ ես փոշիման .
Այսօր եհաս ինձ հրաման որ զիս տարան :

Այլ չեմ տեսեալ զայս ճանապարհ որ կու գնամ ,
Ոչ զայս ա՛նեղ օրս որ տեսայ անզերծական .
Զիս կու տանին դառն ու տխուր ու լալական ,
Այլ ճար չունիմ յետ դառնալոյ կամ փախստեան :

Այս ճանապարհս որ կու գնամ անդարձական ,
Դառն եւ դժուար եւ անձանօթ որդւոց մարդկան ,
եւ խիստ ողորմ եւ լալազին անօգնական .
Իմ տանողքն են զօրաւոր ՚ւ ես անարժան :

Դըժոխո՛ց հոտըն կուգայ, ես կ'երերամ,
Սատանայ զիս խոցերէ 'ւ ես կու դողամ.
Մեղաւորաց ձայնն կուգայ որ կու կոծան,
Աղաղակեն ի չար տանջանս անօգնական:

Անդնդոց խաւարն ի բաց պատրաստական,
Լալ աչացն եւ ատամանցն կափկափման,
Սանդարամետն անհընարին անգնդական.
Եւ դժոխոց հուր գեհենին անչիջական:

Հանց թագաւոր կու տեսանեմ զարմանական,
Որ երկնային զօրքն ի ահէն սարսեալ դողան.
Ես անարժան եմ տեսանել զանմահ արքայն,
Որ խաչեցաւ իմովս մարմնով՝ որպէս գրեցան:

Մեղքըն խաբեաց մարմնով կենցաղս հեշտական
'Ի եկի՛ տեսայ զտանջարանըս զանազան.
Աստէն չունիմ գործելոյ ճար կամ քաւարան.
Իմ դեղըն դուք էք յաշխարհի աղօթական:

Աղաչեցէք վասն իմ զտէր արարչական,
Ձղասս անմարմնոցն որ ի յերկինս են փառարան:
Ձարարչական բանին ծնողըն Մարիամ,
Որ անգաղար բարեխօսէ աղգի մարդկան:

Ինք հայցեցէք ի Սուրբ Հոգւոյն մաքրողական,
Պատարագօք ինձ օգնեցէք մաղթողական.
Ես հաւատովս վերանամ երկնից խորան.
Ձի Տէրն քաղցր եւ պարտական ողորմութեան:

Դրեցաւ. սաչս ողբերակսն ի քուսխանորեանս Հայոց
ՈճԼԹ. ի յարսեսսն սեպտեմբերի թԱ. . ձե-
ռաւր գծողի սարիս. տրուի ծառայ յեսնեաչն ամենեցուն
ԱՆՏՈՆ ԴՊՐԻ

(Տաղարան, Ս. Աղաբու վանքի ձեռագիրներու հաւաքածոյն, թիւ. 370):

ԱԶԳԱՔԻՆ ՔՐՈՆԻԿ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏՏԸ . — Կոմիտաս վարդապետը որ ամառ մը չափ Բարիզ մնաց, համակրութեան ցոյցերով պաշարուեցաւ քաղաքիս հայ գաղթականութիւնէն: Մեր մատուռը, խուռն բազմութեամբ լեցուեցաւ այն մէկ քանի կիրակիներն ուր վարդապետը երգեց:

Տաղանգաւոր արուեստագէտը կը մեկնի ընդհուպ էջմիածին, վերստին գլուխն անցնելու իր այնտեղ հիմնած երաժշտական գործին, որ մեծապէս զնահատուած ու խրախուսուած է Խրիմեան Հայրիկէն:

Կոմիտաս վարդապետը մին է այն բազմութիւն երիտասարդներէն որոնց եւրոպական համալսարաններու մէջ ուսումնասիրութեանն օժանդակած է Պ. Մանթաշեան, որ արդէն մասնաւոր համակրութեամբ մը կը հետեւի իր այդ բազմարդիւն բարերարեալին դործունէութեանը: Ուրախ ենք սեսնելով որ հայ երաժշտութեան վերակենդանացուցիչը ունեցած է ուրեմն եւ պիտի միշտ ունենայ անշուշտ այն բոլոր բարոյական ու նիւթական աջակցութիւնը որ հարկաւոր է իր մեծ ծրագիրն ամբողջապէս ի կատար հանելու համար:

ՏՐ. Յ Մ. ՓԱՓԱՋԵԱՆ . — Հաճոյքով կ'իմանտեսք թէ Պ. Տոքթոր Յարութիւն Փալազեան «Փրանսայի ատամնաբոյժներու ընդհանուր ընկերակցութեան» անդամ ընտրուած է ատաջարկութեամբ երկու մեծ բրոֆեսորներու:



ԳՐՔԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

- ՏՈՔՏՈՐ ՔՕԼՕԼԵԱՆ ԵՒ «ԻՍԹԵՐԻ»Ն . — «ՄԸՇԱԿ»Ի ՔՐՈՆԻԿԱԳԻՐԸ . — ՎԵՐՋԻՆ ԲԱՌ ՄԸՊ . — ՀՍԽՈՒՄԵԱՆԻՆ ՀԱՄԱՐ . — ԲԵՒԵՌՍ . — ԳԷՏԻ ՄԸ ՀՈԳԻՆ . — «ՆՈՐ ԿԵՍՆԷՔ»Ը . — «ԴՐՕՇԱԿ»Ն ԵՒ ՀՍՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀՍՐՃԸ . — ՍԱՍՈՒՆԻ ԽՆԴԻՐԸ . —

— ՏՈՔՏՈՐ ՔՕԼՕԼԵԱՆ ԵՒ «ԻՍԹԵՐԻ»Ն . — «Ժողովուրդին համար» ամսագրով վերջերս Բարիզ հիմնուած ամսագրի մը մէջ, որ կը հը-

րատարակէ Գ. Փանակի հզօր ուսումնասիրութիւնները Հայոց հին պատմութեան վրայ, սոքթոր Քօլօլեան հետեւեալ տողերը կը նըւերէ «Իսթերի»ին ի՞նչ բլլալը բացատրելու.

«Իսթերիք բառը այնքան գործածուեցաւ վերջերս անոր ինչ բլլալը չգիտցողներէ, որ վերջապէս պէտք է մենք ալ գիտնա՛ք թէ ի՞նչ է իսթերին, թէ ամէն «սոս»ի գործածուելիք համո՞մ մըն է ան:

«Իսթերին կը վերաբերի ուղեղային այլասերումէն ծնած այն ախտերուն որոնք շղոտութեան եւ խենթութեան մէջ կը լուղան, մտենալով աւելի այս վերջինին: Իսթերին կը ներկայանայ բժիշկին՝ ջղաճգութիւններով (attaque hysterique) ու մտաւարկան մասնաւոր վիճակով մը: Շարքօ կ'ըսէր թէ իսթերին մասին հիւանդութիւն մըն է: Բայց իսթերիքին միտքը այնքան այլասերեալ է, այնքան տափակ, այնքան տկար, որ անկարող է նոյն իսկ սովորականին մօտեցող մտաւորական սեւ է արտադրութիւն մը ընել. անոր յիշողութիւնը, ուղեղը՝ որ վայրկենական տպաւորութիւններու տակ կը դործէ, այլանդակութիւններէ զատ բան մը չկրնար ծնեցնել: Վարպետս Մանեան՝ համբաւոր ջլախտաբոյժը, կ'ըսէ անոնց համար. «Սննդաբոյժ, դիւրազգաց, յարափոփոխ էակներ են որոնք անտարբեր կը մնան ընտանեկան սուգերուն, որոնք անթաց աչքով եւ պզգ սրտով ներկայ կ'ըլլան իրենց հօրը մեռելին, եւ որոնք կը կոծեն, կ'ախուժախեն, սրտապատառ ճիչեր կ'արձակեն սատկած գորտի մը եւ հաւի մը ու ջեւ:»

Սրամտութեան փիւնիկ մը բլլալու պէտք չկայ հասկնալու համար թէ այս ամբողջ հատուածը ինծի կ'ուզուի. ես եմ՝ միայն որ վերջերս իսթերիի վրայ խօսեցայ Պարթեւեանին «Սարազան»ին առթիւ: Այս տողերը նպատակ ունին զգացնելու թէ կարելի չէր Պարթեւեանին իսթերի վերագրել քանի որ միեւնոյն ատեն գեղեցկագիտական կարողութեանց գոյութիւնը կ'ընդունէի անոր մէջ պիտի բացատրեմ ստորեւ թէ այդ երկու բաները շատ լաւ կը հաշտուին տեսակ մը խառնուածքներու մէջ, եւ թէ արդոյ սոքթորին վճիռը իսթերիքներու մասին իր կարծածէն շատ նըւազ ամուր է. բայց կ'ուզեմ նախ հոս ճշգեղ կէտ մը. Պարթեւեանին «Իսթերի» վերագրելը պարզապէս «գրական» ձեւ մըն էր, որուն մէջ գիտական սեւ է յաւակնութիւն ներկի չէր տեսնել, — հակառակ «բառին զուտ բժշկական իմաստով» բացատրութեանս, որ միեւնոյն գըրական ձեւին շարունակութիւնն է լոկ: — Երբ այսինչ գրողը «սպուշ» մըն է, կամ այնինչ գրողը «լուանոտի հոգի մը ունի» կ'ըսենք զըրական քննադատութեան մը մէջ, ոչ ոք չ'ենթադրեր թէ այդ գրողներուն իրօք հիւանդանոցի

մէջ խնամուող «բրեթէն»ի կամ նոպաներ ունեցող ընկաւորի վիճակը կը վերագրուի : Փոխաբերութիւն մըն է պարզապէս , քիչ շատ զրական հմտութիւն ունեցող անձի մը համար շատ դիւրահասկանալի : Եթէ Պարթեւեանը իրօք իսթերիք մը ըլլար՝ աղեղնածեւ պրիուսիներու եւ Սէն-Կիի պարերու գատապարտուած , երբեք այդ բանը բերանս պիտի չառնէի իրեն մասին գրուած քննադատականի մը մէջ , որովհետեւ ամենէն զգուելի բանն է անձի մը կրեւսին զարնել իր իրաւցնէ ունեցած ընկան մէկ տկարութիւնը :

Տօքթորին տողերը , — Մանեանի կտորին յիշատակումը մանաւանդ , — կը ձգտին նաեւ ցոյց տալու որ ե՛ս եմ բուն իսթերիքը : Ես , արդարեւ , յաճախ գթութեան էջեր ստորագրած եմ սատկած ձիւղ գիակի մը վրայ կամ տառապող անասուններու մասին՝ ընդհանրապէս . եւ «իրենց հօրը մեռելին անթաց աչքով ներկայ կ'ըլլան» բացատրութիւնը կը նկրտի հաստատել Պարթեւեանի բանֆլէին ամենէն նոզկալի ստութիւնը որ զիս կը ներկայացնէր անտարբեր ու քարտիքո՛ հօրս դազաղին առջեւ : Չեմ ուզեր հոս ծանրանալ այս կէտին վրայ . չէի երբեք երեւակայնոր ինծի հետ վէճ ունեցող գրագէտներ խեղճ հայրս իր գերեզմանին մէջ անհանգիստ րնելու չափ պոզալի պիտի ըլլային : Տօքթոր Քօլօլեանը , որ գիտէ թէ ամէն պարագայի մէջ Պարթեւեանէն չէ որ որդիական պարտականութեանց մասին գաս առնելիք ունիմ , պէտք չէր որ այս շիւ աջակցութիւնը չնորհել զիջանէր աղտոտ զրպարտութեան մը :

Բայց խնդիրը հոտ չէ : Խնդիրը գիտնալու վրայ է թէ ի՞նչ է իսթերին , եւ թէ իրօք «անոնք որ վերջերս այդ բանը գործածեցին» , չէի՞ն գիտեր անոր իմաստը , թող ներուի ինձի , որքան ալ «հեթանոս» մը ըլլամ խնդրոյն մէջ , երկու բառով բացատրել մեր յարգելի յիմարաբոյժին թէ իր պատգամը ո՛ր աստիճան խախուտ է :

Այդ հատուածը զոր տօքթոր Քօլօլեան կը յիշէ «համբաւաւոր ջլախտաբոյժ Մանեանէն» , բնաւ երբեք չի վերաբերի իսթերիի՝ Մանեան այդ տողերը գրած է այլաւերածներուն (dégénére) համար : Ահա այդ կտորը՝ բառական թարգմանութեամբ . «Տղայ հասակէն , այլասերեալները իրենց բնածին խանգարումը կը յայտնեն : Երբ արբուճքի հասնին անզուսպ կը յայտնուին իրենց անզիմաղըրելի հակումներուն : Իւրարորքք , տպաւորական , յեղեղուկ էակներ , որ անտարբեր կ'երեւան ընտանեկան սուգերու , որ չոր աչքով պաղ սրտով ներկայ կը գտնուին իրենց հօրը վերջին վայրկեաններուն , եւ կ'ողբան , կ'ախուժախեն , սրտածմելի աղաղակներ կ'արձակեն սատկած գորտի մը կամ հաւի մը առջեւ» (*) :

Այս բոլորը «իսթերի»ի հետ ո եւ է յարաբերութիւն չունի . նոյն գրքին մէջ , Մանեան գէտ գրուի մը շատ խցուցած ե լուսնոտութեան եւ իսթերիի , որոնք անշուշտ առնչութիւն ունին այլասերումի հետ , բայց նոյն բանը չեն , քանի որ մարդ մը առանց զուտ այլասերած մը ըլլալու կրնայ իսթերի կամ լուսնոտութիւն ունենալ (*) : Կամ այն է որ մեծարդոյ տօքթորը կարգացածը հասկնալու անկարող է , եւ կամ այն է որ դիտմամբ այլասերուածներու համար ըսուածը իսթերիքներուն կերակրած է՝ միմիայն Պարթեւեանին հաճելի ըլլալու համար . եւ այս խեղճութիւնումին մէջ , (որ չեմ գիտեր թէ ո՛րքան արդարանալի է ոչ միայն գիտական ճշդութեան այլ եւ պարզ գրական խղճամտութեան տեսակէտով ,) այնչափ յառաջ դացած է որ մինչեւ անգամ Մանեանի բացատրութիւնները փոփոխած ե՛ր զանոնք Պարթեւեանին զըրպարտութեանը համաձայնեցնելու համար . Մանեան կ'ըսէ՝ «իրենց հօրը վերջին վայրկեաններուն չոր աչքով ներկայ կ'ըլլան» , Տօքթոր Քօլօլեան կը թարգմանէ «իրենց հօրը մեռելին» , (այսինքն յուզարկաւորութեանը) . միեւնոյն բանը չէ . եւ խեղճութիւնումին մէջ գրուած թաքուն դիտաւորութիւնը այդ փոփոխութեան կուտայ շատ անազնիւ հանդամանք մը որ անպատուաբեր է , ոչ միայն գիտութեան մարդու մը այլ ո եւ է մարդու :

Հիմա գանձախնայ վերջապէս թէ ի՞նչ է «իսթերի»ն եւ թէ իրօք այդ ախտով բռնուած հիււանդները անպատճառ ու միշտ դատապարտուած կ'ըլլան «տափակ , տկար միտք ունենալու , նոյն իսկ սովորականին մօտեցող ո եւ է արտադրութեան անկարող ըլլալու , այլանդակութիւններէ զատ բան մը ծնիլ չկարենալու» :

Այն հակիրճ ու աղօտ սահմանը զոր տօքթորը տուած է իսթերիի մասին , անբաւական է արդէն եւ՛ կարելի է բո՛ւլ անճիշտ : Իսթերին «խնթութեան մօտեցող ախտ մը» չէ . խնթութեան կրնայ առաջնորդել երբեմն , բայց խնթութեանէն տարբեր , ուրոյն տկարութիւն մըն է : «Այլազան ցնորագագացութեանց (hallucination) եւ զատանցանքի ներկայութիւնը խնթութեան (aliénation mentale) բարդացումը չի բերի իր հետը անպատճառ : Իսթերո-լուսնոտութիւնը ոչ յիմարութիւնով բարդուած իսթերի մըն է եւ ոչ ալ լուսնոտութեամբ բարդուած իսթերի մը : Ըսել չենք ուղեր թէ

(*) Կալծողներ եղած են , կը գրէ Մանեան նոյն գրքին մէջ , (էջ 190) թէ մարդ չի կրնար միեւնոյն ժամանակ լուսնոտ եւ մտքով առողջ ըլլալ . անշուշտ , լուսնոտութիւնը յաճախ կ'ընկերանայ ապուշտութեան կամ մտքի տկարութեան : Բայց բազմաթիւ իրողութիւններ կ'ապացուցանեն թէ ամուր եւ լաւ զարգացած իմացականութիւն մը կրնայ միանալ ջլախտին :

խթերին չի կրնար ընկերակցել յիմարութեան այլ եւ այլ ձեւերու հետ, ինչպէս որ ան կրնայ յայտնուիլ՝ արդէն լուսնոտութենէ բնուած անձի մը մէջ: Բայց ինչ որ կ'ուզենք ի վեր հանել, սա է որ մտաւորական կամ ըզգայնական խանգարումները որոնք (խթերական) մեծ իջուածքին մաս կը կազմեն, ոչ մէկ կերպով խնդրութեան չեն պատկանիր, այլ նոյն ինքն խթերիէն կը բղխին, այնքան որքան այլազան ջղաձգական արկածները որոնք (խթերիի) առաջին երկու շրջանները կը կազմեն (*):

«Խթերիին», կը գրէ Պ. Բոլ Սուրիէ, իր «Մընտնդ ու բնութիւն խթերիի» գործին մէջ որ, ըստ Պ. Լէոն Մարիյէի, այդ ախտին վրայ մինչեւ այսօր երեւցած լաւագոյն աշխատութիւնն է, ուղեղին ֆիզիքական, պաշտօնավարական մէկ մեծ խանգարումն է, որ կը կայանայ ուղեղային կեդրոններու տեղականացեալ կամ ընդհանրացեալ, վաղանցուկ կամ մշտական ընդամացման մը կամ քունի մը մէջ, եւ որ հետեւաբար երեւան կուգայ վարակուած կեդրոնին հսմեմատ՝ երակաշարժական եւ սննդառական, ընդերական, զգայարանական եւ զգայնական, չարժողական եւ վերջապէս հոգեկան արտայայտութիւններով, եւ ըստ իր պէսպիսութեանց, իր աստիճանին եւ իր տեւողութեան, փոխանցական տաղնայնորով, մշտական նշաններով (stigmata) կամ մոլեգնական արկածներով: Մտուգուած խթերիքները արթնաշրջիկներ են, որոնց քունի վիճակը աւելի կամ նուազ խորունկ, աւելի կամ նուազ ընդարձակ է: (**)

Խթերին սակայն կարող է, ինչպէս եւ լուսնոտութիւնը՝ որ աւելի ծանր ախտ մըն է, ինչպէս արդէն՝ ո եւ է ջլխտ, միանալ մտաւորական ամենաբարձր կարողութիւններու: Վերեւ յիշեցի Մանեանի տողերը որ այս գաղափարը շատ յստակօրէն կը բացատրեն: Պէտք չէ մոռնալ թէ Յուլիոս Կեսար, Բասթալ եւ Ճլուպէր լուսնոտ էին, եւ սակայն ասի չարգիլեց որ անոնք սովորականէն բաւական տարբեր գործեր արտադրէին եւ ըլլային մտքեր քիչ մը աւելի շահեկան քան մեծարգոյ Տր. Քօլօլեանը որ լուսնոտ չէ: Նմանապէս, հզած են եւ կան շատ բարձր մտքով անձեր, որոնք խթերի ունին միանգամայն. «Կարգալէ յետոյ, կ'ըսէ Պ. Փիլ տը լա Թուրէթ, «Սրբուհի Թերեզայի կեանքը»՝ զոր ինքն իսկ գրած է, այլեւս ոչ ոք պիտի տարակուսի թէ «Կատարելութեան ճամբուն» կամ «Ներքին զղեակ» ին մէկ քանի ճշմարտապէս հրաշալի հատուածները գրուած են խթերական յափշտակութենէ մը զարթումին, երբ սրբուհու յնձրան բնականօրէն թափանցող միտքը ա'լ աւելի կը բորբոքէր (**):»

(*) P. Richet. — Etudes cliniques sur la grande hystérie ou l'hystéro-épilepsie, էջ 161 :
 (***) Paul Sollier. Genèse et Nature de l'Hystérie, էջ 520 :

«Սրբուհի Թերեզա, կը գրէ նոյն հեղինակը, կ'օգտուի կերպով մը՝ իր իջուածքներէն (attaque) ա'լ աւելի խորը թափանցելու համար իր նրբին վերլուծումի հրաշալի մաքին ալքերուն մէջ: ... Իջուածքին այդ շրջանին (երրորդ շրջանը) մէջ է ... որ քուրմերը կը հարցափորձէին նախնեաց սիրելիլաները եւ անոնց պատգամ արտասանել կուսային: Իջուածքը վերջին աստիճան կը զարգացնէր բնական յատկութիւններն այդ կիներուն, որոնք անտարակոյս խթերիք էին, ընտրուած ամենէն ուշիմներուն մէջէն, տղայ հասակնուն իրենց քրմուհիի արհեստին համար մարդուած եւ օրուան դէպքերուն միշտ տեղեակ պահուած: (***)» Վերջապէս, Պ. Բոլ Սուրիէ կը գրէ հետեւեալը, «Սրբուհի Թաթերինա տի Սիեննայի ոտքերն ու ձեռքերը կը կծկուէին ջղաձգական ձեւով մը. մատները մէջէ մէջ կը մոտնէին եւ այնքան ուժով կը սեղմէին առարկաները՝ իջուածքին միջոցին, որ աւելի զիւրին էր իր մատները կոտորել քան թէ անոնց սեղմածը դուրս քաշել: Իր յորտը անդամները քարի կարծրութիւն ունէին ... յափշտակութեան (extase) այս բոլոր արտաքին երեւոյթները կը տեսնուին խթերիին մէջ, այդ կարծրացումները, այդ կծկումները գերազանցօրէն խթերական երեւոյթ ունին:» Ուրեմն խթերիք մըն էր Գաթերինա տի Սիեննա, ամենամեծ դէմքերէն մէկը իտալական պատմութեան, որուն առջեւ Գրիգոր ԺԱ պապն իսկ կը խոնարհէր եւ որուն հարիւրաւոր նամակներն եւ հոյակապ «Գիրք Աստուածային վարդապետութեան»ը այլապէս գեղեցիկ են եւ «սովորականէն տարբեր» քան կարգ մը կարծեցեալ գիտնականներու ձափընտուքները:

Այո՛, տոքթոր, գիտնա՛նք վերջապէս թէ ի՛նչ է խթերին ...

«ՄՇԱԿ»ԻՆ ԲՐՈՆԻԿԱԳԻՐԸ. — «Մշակ»ին քրոնիկագիրը, որ երեք չորս ամիս առաջ իր անուղղամտութիւնը ապացուցանող մէկ քանի տողերուս ոչինչ դատու պատասխանելու, կը վերսկսի ինձմով գրադիլ՝ բոլորովին տարբեր եղանակ մը հնչեցնելով: Պարթեւեանի «Խարաղան»ն ու անոր մասին իմ գրածս իր ազնուական ջիղերը վրդովեց են, եւ անէ՛ք կը կարգայ արտասանմանի գրականութեան գէ՛մ ուր Պարթեւեան մը «մարդկային կղկղանք» կ'անուանեն ... «Ահա ինչ է ուղարկուած մեզ արտասանմանը, այդ հիստանալի աշխարհը, ուր այնքան գեղեցիկ գործեր եւ գազափարներ կան: Կե՛ղտ, կե՛ղտ, կե՛ղտ»:

(***) Gilles de la Tourette. — Traité clinique et thérapeutique de l'hystérie, d'après l'enseignement de la Salpêtrière, seconde partie, Hystérie paroxystique, էջ 50 :

«Մշակ»ին քրոնիկագիրը այս տողերը կը գրէ կարգացած ըլլալով «Խարազան»ը, եւ ինքն իսկ համոզուած ըլլալէ յետոյ (քանի որ պարկեշտութիւնը կ'ունենայ իր այդ յօդուածին մէջ իսկ վայն յայտնելու) որ այդ բանֆլէն անձնական հաշիւները, փողոցային հայրոցայինները մի կեղտոտ տոպրակ է որ միայն եւ միայն զգուանք կարող է պատճառել: »նոյն իսկ, անոր զգուանքութեանը չ'բայ զազափար մը տալու համար, «Մշակ»ի քրոնիկագիրը կը յիշէ այն հրէշային հատուածը ուր ցնորատես խարազանակիրը զիս կը ներկայացնէր իբրեւ «Բարիկ եկող հարուստ Ռուսահայերը «նրա՛մէ-րօ ուրժ»եր առաջնորդելն իրեն արհեստ ըրած մարդ մը (պա՛րզապէս): «Մշակ»ի քրոնիկագիրը գիտէ թէ այդ ֆրազը ո՛ր աստիճան ապիրատ խեղաթիւրում մըն է ամենապարզ իրողութեան մը, «Մշակ»ի երկու աշխատակիցներ անցեալ տարի, ինձմէ խնդրեցին պարապոյ ժամերուս մէջ առաջնորդել իրենց երկու անձնական բարեկամներուն որոնք՝ ֆրանսերէնի անտեղեակ՝ կ'ուզէին Բարիկի ցուցահանդէսն այցելել: Պարթեւեան, որ շատ մօտէն ճանչցած է իմ բարձրերս ու նկարագիրս եւ բացարձակապէս համոզուած է որ ես անկարող եմ կատարելու այդ լըրճուկ զերժ գոր ինծի կը վերագրէ, այդ տողերը գրած է զիս ազարտելու միակ ու զազիր դիտումով: Ի՛նչ իբրևունքով «Մշակ»ին քրոնիկագիրը կը գատապարտէ զիս՝ այսպիսի վարմունք ունեցող անձ մը որակած ըլլալուս համար բացատրութեամբ մը, որ անշուշտ շէնորհալի չէ բայց որ բացարձակապէս ճիշդ է, եւ՝ ճիշդ ըլլալով՝ գործածելի, նոյն իսկ անհրաժեշտ քանի որ պատշաճագոյնն է: Եւ ինչպէս մանաւանդ «Մշակ»ի քրոնիկագիրը միեւնոյն գծին վրայ կը գնէ խեղաթիւրումը, զըրպարտութիւնը, գուեհկութիւնը, չարութիւնը, ստութիւնը այդ գերազրական սատկութեան հասցընող անձի մը գրուածքը եւ այդ հրէշութիւնն արտագրողին հոգին պատկերող բացատրութիւն մը:

Ու վերջապէս ի՞նչու «Մշակ»ի քրոնիկագիրը, այս վայելչութեան, մաքրումութեան, քաղաքավարութեան ծայրայեղ եւ անճիշդ տենչանքէն բոնուած, չի յիշեր որ եթէ կծու եւ կարծր բառեր գործածելը թերութիւն մըն է, ինքը շատ աւելի յաճախ ունեցած է զայն քան արտասահմանի ո եւ է գրող: «Մշակ»ի քրոնիկագիրը թող հաճի յիշել իր երկարատեւ վէճը նախկին «Մուրճ»ին դէմ. թող յիշէ այն աղբի ու տիղմի մէջէ քաղուած բացատրութիւնները որոնցմով ա՛յնքան ատեն քարկածեց Պ. Արասխանեանցը: «Մշակ»ի քրոնիկագիրը, որ շատ ստովելիք ու օգտուելիք բաներ կրնայ գտնել արտասահմանէն ելած գրականութեան մէջ, բան մը չունի ստովելիք կոպիտ բացատրութիւններու գործածման համար: Տարբերութիւնը այն է իր եւ իմ մէջս, որ իր բացատրութիւնները՝ Արասխանեանցի պէս անկեզծօրէն օգտակար ըլլալ ուզող ազնիւ ան-

ճի մը դէմ՝ անիրաւ էին եւ անսուղի, հետեւաբար տգեղ ու միմիայն տպել, մինչդեռ իմ բացատրութիւնս արամաբանական է, հիմնաւոր, ճիշդ, եւ հետեւաբար զերծ ո եւ է տղիւութենէ:

ՎԵՐՁԻՆ ԲՍՌ ՄԸ Պ. ՀԱՆՈՒՄԵՍԱՆԻՆ ՀԱՄԱՐ. — Պ. Հախումեան իրեն մասին գրածիս ուրիշ պատասխան չէ գտած տալու բայց եթէ իր ժամանակին առաջին թիւին մէջ յայտարարել թէ «չուզեր եղեր զբաղիլ անձով մը որ իբրեւ eseroc գատարանի ենթարկուած է»: Պ. Հախումեան որ ասկից ուրիշ բան չէ գտեր ըսելով ինքզինքը չբմեղացնելու համար պէտք է ըմբռնէ որ նոյն իսկ եթէ ես esero: մը ըլլայի, ինքը ատով չի դադրիր զրպարտել մը ըլլալէ Բարիկի «Հայկական Ուսումնասիրաց Ընկերութեան» նկատմամբ, եւ թեթեւօղիկ մը ամենուն եւ ամէն բանի նկատմամբ: Միայն թէ զիտնալէ յետոյ որ ես ոչ թէ գատարանի ենթարկուած եմ, այլ ես իսկ պատուոյ ատեան պահանջած եմ զրպարտիչներս խայտառակելու համար եւ թէ պատուոյ ատեանը զրպարտիչներուս բոլոր ամբաստանութիւնները ոչ-պայացուցուած հռչակած է: Երբ Պ. Հախումեան իր թերթին մէջ այդպիսի ստույգութիւն մը կը հրատարակէ, ինքն իսկ իր ձեռքովն իր հոգին պատկերացուցած կ'ըլլայ իր բովանդակ այլանդակութեանը մէջ: Եւ ես դժգոհ չեմ արդէն որ eseroc համարուիմ անձէ մը որ նոյն թերթին մէջ «Թափառաշրջիկ բազմախնդիր, տղէտ տիրացու» կը հռչակէ Մխիթար արքայն, այսինքն նոր ժամանակներու ամենէն մեծ Հայերէն մին, որուն կոչիլին մէկ զամս իսկ աւելի թանկագին է Հայոց համար քան Հախումեան ըսուած շնորհազէն իր ամբողջութեանը մէջ:

ԲԵԻՆՈՒՍԴԵՏԻ ՄԸ ՀՈԳԻՆ. — «Նոր Դար»ը իր այս տարուան 95 եւ 96 թիւերով ընդարձակ առաջնորդող մը հրատարակած էր իր խորհրդածութիւններն յայտնելու համար Բարիկի մէջ կանգնուելիք հայկական եկեղեցիին մասին բեւեռապէտ Պ. Բասմաջեանին հայեցողութեանը նկատմամբ:

«Պարիկի Հայոց եկեղեցին» խորագիրը կրող խմբագրութեանս ուղղուած նամակում (Տես «Նոր Դար», թիւ 94), կը գրէ «Նոր Դար» ի յօդուածագիրը, Պ. Բասմաջեանը Բարիկում մեծածախս եկեղեցի շինելու դէմ լինելով իւր կողմից իւր հայրացքները հաստատելու համար հետեւեալ գատողութիւնն է անում. — որովհետեւ Պարիկցին զիտէ որ Հայոց ազգը աղքատ է եւ ողորմութեան կարօտ, եւ նրա որդիքը կը թափառին Պարիզի փողոցներում մերկ ու անօթի եւ իւր զթութիւնը յայտնելով Հայոց ազգին, ամէն հանգանակութեան մասնակցում է Պարիզցին, արդ' նոյն այդ փրանսիացի ի՞նչ պիտի մտածէ Հայոց մասին, երբ իւր թթի տակ՝

Հայերը մեծ եւ թանկագին եկեղեցի կառուցանեն : Ի հարկէ այդ հանգամանքում է՛լ երես չի ունենար Պարիզում թափառող քաղցած Հայը , օգնութեան կարօտ ուսանողը , գրադէտը , բաղխելու բարեսիրաժրանսիացու դուռը եւ ողորմութիւն խնդրելու : Այսպէս է դատում Պ. Բասմաջեանը : Նորա լողիկայով , պէտք է որ բարեսիրտ Ֆրանսիացուն հաւատացնենք որ Հայոց ազգն աղքատ է եւ գթութեան ու ողորմութեան կարօտ , եւ այդ հաւատքի մէջ պահենք նրան , որպէսզի հայ գրագէտն եւ Պարիզում թափառող աղքատ Հայը կարողանան օգտուիլ Ֆրանսիացու բարերարութիւնից եւ ողորմածութիւնից : Ուրեմն ի՛նչ հարկաւոր է հոյակապ եկեղեցի : Կեցցէ՛ խաչագողութիւնը : . . .

«Ի՛նչպիսի նախատինք ամբողջ հայ ազգին եւ նրա անուանը : Մե՛նք լիովին համոզուած ենք որ Պ. Բասմաջեանը իւր այլը նախատելու միտք չէ ունեցեր , ընդհակառակն հաւատացած է որ մի շատ նպատակաշարժար գաղտնութիւն է անում Հէնց ցաւն էլ դա է որ նա ամբողջ ազգը վերաւորելով , ստորնացնելով՝ չէ իմանում որ վերաւորում եւ ստորնացնում է : Պարոնն իսկապէս եւ ահա մայ արտայայտել է հայութեան մէջ տիրող հոգուն , որ առաջ է գալիս ազգային արժանապատուութեան զգացմունքի եթէ չաւսնք չգոյութիւնից , թուլութիւնից : . . . Եթէ Հայոց հոյակապ եկեղեցի շինուի Պարիզում , այնուամենայնիւ Ֆրանսիացին իրրեւ մարդ պարտաւոր է օգնել աղքատին եւ որբին , ուզում է հալ լինի , ուզում է թուրք : . . . Վերին աստիճանի օտարոտի լողիկայէ եւ աւելացնենք , անբարոյական ու ազգի համար ստորնացուցիչ վարդապետութեւն է այն , որ Հայոց ազգը պէտք է աղքատ ճանաչուի , որպէս զի Նւրոպա ինկած այս ու այն Հայը կարողանայ օգնութիւն հայցել եւ ստանալ Եւրոպացիներէր : Ազգը աղքատ ներկայացընել եւ նրա աղքատութիւնը շահագործել , դա խաչագողութեան մի տեսակն է : Ճշմարտութիւնը պէտք է խոստովանիլ , մանաւանդ այդ ճշմարտութիւնը խոստովանելով գործը չէ վնասում . Հայոց ազգը նիւթապէս ամենեւին աղքատ չէ . Հայոց ազգը եկեղեցու հետ միասին կարող է իւր որբերը պահել եւ խնամել , կարող է օգնութեան կարօտ մասաղ սերնդիկրթութեան համար պահանջուած ծախքն անել , զպրօցներ հաստատել , հիւանդանոցներ , անկելանոցներ հիմնել , եւն ա Հայոց ազգը փողով աղքատ չէ ամենեւին . Հայոց ազգը աղքատ է հոգով : »

Բարիկ կառուցուելիք եկեղեցիին համար ամէն տեսակէտով զիտողութիւններ եղած էին մեր մամուլին մէջ , բայց մուրացկանութեան տեսակէտը ոչ մէկուն մտքէն չէր անցած : Պ .

Բասմաջեան այդ պակասը լրացուցեր է սրտազող պերճախօսութեան մը յուզելչ աւելնալը : «Նոր Իար» ի յօդուածագիրն այնքան որոշ : Ճիշդ ու կորովի կերպով խարանած է տեսական մուրացկանութեան բարիզարնակ մասնագէտին ընթացքը , որ այդ մասին պէտք չեմ տեսներ բառ մը աւելցնելու : Միայն անօգուտ չեմ չկատեր կրկու խոսք ըսել այդ ընթացքը ունեցող պարոնին բարոյական ընդհանուր տիպարին վրայ :

Մինչեւ այս վերջերս Պ. Բասմաջեանին նըկատմամբ յարգանքէ աւարելի ու է զպացում չէի տածած , ինկատի ունենալով իր աշխատասիրութիւնը , չարքաշութիւնը , եւ ենթադրելով իր մէջ իր մասնագիտութեանը բոլորանուէր , գաղափարական ազնիւ մթնոլորտի մը մէջ մեկուսացած միտք մը : «Անահիտ» ի ընթերցողները կը յիշեն այն անկեղծ համակրութեան տողերը որոնցմով կը գնահատէի «Բանասէր» ի օգտակարութիւնը : Անշուշտ , զինքը իմացականութեան արծիւ մը չէի նկատած երբեք . հայկական բեւեռագիտութեան շատ շահեկան եւ շատ բեղուն ճիւղին մէջ , Պ. Բասմաջեան ուրիշ բան չէ կրցած ընել մինչև ցարկ բաց եթէ բանուրի գործ մը , — արձանագրութիւններ օրինակել , կարգալ եւ հատուածական , մանրամասնական մեկնութիւններով զանոնք բացատրել : Փափաքը զոր յայտնած էի տեսնելու հայկական արձանագրութեան վրայ ընդհանուր ուսումնասիրութիւններ որոնք վերջապէս մեզի ճանչցնէին Պ. Բասմաջեանի եզրակացութիւնները Հայոց պատմութեան հնագոյն շրջանին վրայ , դեռ ո եւ է կերպով չիրագործուեցաւ եւ շատ հաւանականաբար իրագործուելիք չունի : Պ. Բասմաջեան կը շարունակէ ուրիշ բան չընել բայց եթէ արձանագրութիւններ հրատարակել , անոնց ընթերցումն ու երկու բառով մեկնութիւնը տալ , մինչդեռ Հ. Սանտալեանն ու Պ. Գ. Սալաթեան «Հանդէս Ամսօրեայ» ին մէջ , Արթօ՝ «Նոր Կեանք» ին մէջ շատ աւելի շահեկան ու լայն եղանակով մը սկսան ցոյց տալ այդ արձանագրութիւններուն պարունակութենէն հանուելիք բնութանուր գաղափարները , Հակոտակ այս ամենուն , երբեք չէի կրցած վերագրել Պ. Բասմաջեանին՝ անազնիւ ձգտումներ , ցած զգացումներ : Ասկից երկու երեք ամիս առաջ իր այդ մուրացկանապաշտ նամակը զիս պիտի դարձանէր . հիմա չեմ զարմանար , յորմեհետէ այդ պարոնին հոգին (եթէ կարելի է այս բառը այս պարագային մէջ գործածել) մօտէն ճանչցայ՝ վերջերս պատահող կարգ մը դէպքերու մէջէն : Ի՛նչ պահանջքովս կազմուած պատուոյ տեսանին մէջ , ամենէն զգուելի դերը Պ. Բասմաջեանն է որ կատարեց : Ինձի վնասելու համար , չքաշուեցաւ ամենէն զձուձ զրպարտութիւնները բեռցնել հայ կնոջ մը , յարգուած ու տաղանդաւոր պաշտօնակցուհիի

մը վրայ . . եւ Ռուսիոյ Հանրային կրթու-
թեան նախարարին նամակ գրելու հեքեաթն
ալ իր գրեւն է, — միակը զոր կատարած ըլ-
լայ իր ամբողջ կեանքին մէջ (*) Այս բոլորին
վրայ, — որոնք արդէն կը բաւեն երեւան բե-
րելու Պ. Բասմաջեանի ներքինը, — աւելի ման-
րամասնօրէն պիտի խօսիմ յառաջիկային, ու-
րովհետեւ ասոնք լոռութեամբ քողարկուելիք
բաներ չեն: Ուրիշ դէպք մը, որ նոյնպէս մեզի
ճանչցուց Պ. Բասմաջեանի նկարագիրը, իր
համբաւաւոր ծախում յօդուածի պատմութիւնն
է, որուն վրայ ամբողջ հայ մամուլը խօսեցաւ:
բայց որու մասին ոչ մէկ թերթ չյայտնեց
այն միակ կարծիքը զոր անհրաժեշտ էր յայտ-
նել: Ամէն ոք կը յիշէ այն երեմիականը զոր
Պ. Բասմաջեան հրատարակած էր ասկէց քա-
նի մը ամիս առաջ «Բիւզանդիոն»ին մէջ,
(ինչպէս եւ «Տարագ»ին եւ Շարժումին մէջ)
եւ որով՝ պատմելէ յետոյ թէ իր նիւթական
անձկութեանը պատճառով Ֆրանսացի գէտնա-
կանի մը ծախած էր իր մէկ յօդուածը,
կը նախատէր եւ կ'անիծէր ամբողջ հայ ազգը,
եւ կը սպառնար անոր՝ իր բոլոր անտիպ գը-
րութիւնները այրել, որպէս զի այդ պակաստ
ժողովուրդը զրկուէր ամբողջ լոյսէն զոր այդ
թաքուն գանձերն անոր վրայ պիտի հեղեղէին
անտարակուսելի կերպով: Բո վանդակ հայ մա-
մուլը վսեմ գտաւ այս ազազակը, եւ պաղատա-
գինադերսեց մեր անողոք բեւեռագէտէն՝ խնայել
հայ ազգին, ոչ մէկը չնկատեց թէ ինչքան ալ
դառն ըլլայ նիւթական կացութիւնը, գիտու-
թեան մարդու մը համար ամենէն աններելի

(*) Այդ գրեւոր կը կայանայ հետեւեալ խն-
դաթիւրումին մէջ: «Անտիտ»ի գրաշարէն ի-
մացած ըլլալով Թիֆլիսի գրաքննիչին նա-
մակ գրելու եւ ուսական գրաքննութեան ընդ-
հանուր օրէնքներու մասին տեղեկութիւն խնդ-
րելու գիտաւորութիւնս, Պ. Բասմաջեան այս
պարզ իրողութիւնը կը չարափոխէ եւ երկու
տարի յետոյ նամակով մը պատուոյ ատենին
կը հաղորդէ որ ես Ռուսիոյ Հանրային կրթ-
թութեան նախարարին նամակ գրած եմ եւ
դերձ առաջարկելով գաղտնի ծառայութիւններ
մատուցանել ուս կառավարութեան . . .
Այս ծանր ամբաստանութեան իբրեւ պա-
ցոյց, Պ. Բասմաջեան իր նամակին մէջ ուրիշ
բան չէր ցոյց տար բայց եթէ «Անտիտ»ի
գրաշարը, որ իբր թէ իրեն ըսած է եղեր որ
իմ բացակայութեանս սենեակս մտնելով թըղ-
թերս խառնէր եւ տեսեր ու կարդացեր է նա-
մակ մը զոր գրած եմ եղեր Ռուսիոյ Հանր .
կրթութեան նախարարին՝ գաղտնի ծառայու-

վատութիւնն է իր մտքին արտադրութիւնը
ուրիշի մը ծախելու յանձնառու ըլլալը,
ինչպէս աններելի է որ հայր մը իր գաւակը
ծախէ՝ որքան ալ իր խեղճութիւնն անուրի ըլ-
լայ: Ոչ մէկը չնկատեց դարձեալ թէ աններելի
է որ դրագէտ մը կամ գիտուն մը իր ամբողջ
աղբը նախառէ, պարզապէս սրովհետեւ ան իր
նիւթական կացութիւնը չէ ապահոված: Յոմիէ,
Ֆրանսայի ամենէն մեծ հանձարներէն մին, ա-
ւուր հացի կարօտ մտաւ, բայց երբեք մտքէն
չանցուց, ո՛չ իր գործերը ջնջել, ո՛չ ալ Պարս-
սան բանագրել:

Հայ ազգը շքեղ վեհանձնութեամբ մը պա-
տասխանեց բեւեռագէտին բանագրանքին, Բա-
րիզի Հայոց Հովիւ Վրամշապուհ քահանայն
փութաց 125 Փրանք հաւաքել, որպէս զի Պ.
Բասմաջեան ետ առնէր «օտարին ճանկն ինկած
գանձը» (որուրիշ բան չէր բայց եթէ Զուարթ-
նոց եկեղեցւոյ բակին մէջ գտնուող արձանա-
գրութեան մը լուսանկարը եւ պարզ ընթեր-
ցումը, այսինքն մանրամասնութիւն մը,
որուն հրատարակումը վերջապէս հայ ժողո-
վրդին ճակատագրին վրայ վճռական ազդեցու-
թիւն մը գործելու բնոյթը չունէր,) Ս. Բե-
ղերսպուրկէն ազգային մը 2-300 հարիւր Փրանք
զրկեց, եւ իրումբ մը բարիգաբնակ Հայեր 100
Փրանքի ամսական մը կապեցին իրեն, որպէս ի
այդ օտարագրեցիկ սպառնալիքն ի գործ չդնէ:
Եւ սակայն Պ. Բասմաջեան դեռ չմտածեց գտնէ
տող մը զրկել իր շանթարձակ նամակն հրա-
տարակող լրագրիւրներուն՝ ետ առնելու համար
իր բանագրանքը, որ այնքան չահաբեր եղաւ
իրեն:

թիւն մատուցանելու առաջարկութեամբ:
«Անտիտ»ի գրաշարը յայտարարեց պատուոյ
ատենին առջեւ, ու Պ. Բասմաջեանի ներկա-
յութեանը (որ կցկտուր եւ հակասական պա-
տասխաններ միայն տուաւ) թէ ինքը երբեք
իմ բացակայութեանս սենեակիս մէջ ո եւ է
նամակ չէ կարդացած, թէ ինքը պ. Բասմա-
ջեանին խօսած է միայն գրաքննիչի մը ուղղու-
ած նամակի մը մասին, նամակի մը զոր ո եւ է
թերթի տնօրէն կարող է գրած ըլլալ ո եւ է
երկրի գրաքննութեան, թէ նոյն իսկ ինքը
պ. Բասմաջեանին խորհուրդ տուած է նմանօ-
րինակ նամակ մը գրել Թիֆլիսի գրաքննիչին,
եւ վերջապէս աւելցուց թէ արդէն նիւթապէս
անկարելի էր որ ինքը կարդացած ըլլար Ռու-
սիոյ Հանր. կրթութեան նախարարին ուղղուած
նամակ մը, քանի որ այդպիսի նամակ մը Փրան-
սերէն գրուած պիտի ըլլար անշուշտ, եւ ինքը
Փրանսերէն չի գիտեր:

«ՆՈՐ ԿԵԱՆՔ»Ը. — Իբ այս տարուտն 10րդ թիւէն ի վեր, «Նոր Կեանք»ը հիմնական կերպարանափոխութիւն մը կրած է, զոր աննկերելի պիտի ըլլար չնկատել եւ չգնահատել: Թերթը իր երբեմնի թեթեւ ու երկզիմի նկարագրիւր թողուցած է, մեկդի նետած է անհատական հրատարակութեան մը հանգամանքը զոր ստացած էր ատենէ մը ի վեր, ինքզինքը կը յորջորջէ «օրկան» Հնչակեան կուսակցութեան» եւ իր բոլոր յօդուածները, առանց ստորագրութեան, ամբողջ կուսակցութեան մը անանձնական, հաւաքական մտածումը հաղորդելու կը ձգտին. Ժամանցները, հակայեղափոխական երգիծանքները, պապիկի պատմութիւնները, անձնական ու կուսակցական վէճերը անհետացած են, եւ ինքնապաշտպանութեան դադարը ջատագովող, ստրկութեան դէմ պայքարը զրուատող յօդուածներ, վիպակներ, քրոնիկներ միայն կ'երեւան հոն, տալով այդ թերթին իր տրամաբանական, բնական, անհրաժեշտ գոյնը, յեղափոխական գոյնը: Բայ չեմ ուզեր թէ «Նոր Կեանք»ի այս նոր շրջանին մէջ յայտնուած բոլոր գաղափարները համաձայն են իմ մտածելու եղանակիս. բայց ի՛նչ անիրաւութիւններ ու անճշտութիւններ ալ որ գտնուին այնտեղ արտայայտուած գաղափարներուն մէկ մասին մէջ, ամբողջութիւնը կապակից է ինք իր մէջ ու հետեւական իր նրպատակին հետ. եւ ի տես կերպարանափոխութեան մը որ գովելի եւ ուրախառիթ է ինքնին՝ ես կը մտածեմ թէ անպատեհ պիտի ըլլար հիմա ի վեր հանել մանրամասնութեան մէկ քանի անճշտութիւնները, զորոնք ինքն իսկ կուսակցութիւնը պիտի բազմայի որ դիտնար սրբագրել յառաջիկային: Այս նոր շրջանը կը բացուի Ամբիքարէ Չիրբիտնիի հոյակապ մէկ էջով որ կը հրաւիրէ հայ ժողովուրդը՝ իր ձեռքովն իր դատն շահելու. «Հիծելը բանի մը չի ծառայեր, կ'ըսէ պողպատէ գործիչը, պէտք է հակադրել, գործել, զարնել, իր ճակատագրին դիտակից ժողովուրդ մը օգնութիւն չի հայցեր ոչ Աստուծոյ ոչ մարդոցմէ: Կը միանայ, կը կազմակերպուի, կը զինուի, կը զարնէ, եւ յաղթող կամ յաղթուած՝ ան պիտի ապրի անմահութեան մէջ: Ասոր համար պէտք է գաղափարի մը մէջ փաթեթուած ըլլալ: Յեղափոխութիւն մը որ գաղափարի մը անուսովը չի մարտնչիր, յեղափոխութիւն չէ: Խոռվութիւն մըն է լոկ, զոր պատմութիւնը կ'արհամարհէ եւ չի հաճիր իր անմահ էջերուն մէջ արձանագրել: Անգամ մը որ կը պայթի ան, վա՛յ անոնց որ

դայն կը կասեցնեն, որովհետեւ յեղափոխութիւն մը որ կը կասի, իր պաշտպաններուն համար մահափճիո մը կը ստորագրէ. պէտք է ուրեմն, միշտ եւ միշտ, պատրաստ ըլլալ գործի, գործ որ պէտք է խեղափոխի, խորհրդածուած, տրամաբանուած ըլլայ:»

Աւելի ամբողջական եւ ասելի ճիշդ նշանաբան մը կարելի չէր տալ հայ յեղափոխականներուն, եւ մաղթելի է որ Հնչակեան կուսակցութիւնը, որ անշուշտ ինքն իսկ իր բովանդակ կազմակերպութեանը մէջ նոյնչափ եւ ասելի պիտի ձգտի կերպարանափոխուիլ եւ վերանորոգուիլ որքան իր օրկանը, կէտ տուէր յաջողի իրականացնել մեծ Խտալացիին խորհուրդը: Միանալ, կազմակերպուիլ, զինուիլ, զարնել, — նախ միանալ եւ կազմակերպուիլ՝ կարենալու համար, խելացի, խորհրդածուած ու արամարանուած գործունէութեամբ մը, զարնել, եւ յաղթել, կամ նոյն իսկ եթէ պարտութիւն վիճակուած է մեր գատին, դեղեցիկ, արի պարտութիւն մը ունենալ: Վերակազմուել Հնչակեան կուսակցութեան անուշին պարտքն է ուրեմն ձուլել Հնչակեան կուսակցութեան երկու պառակտուած հատուածները, եւ իր նախկին միութիւնը վերագտած այդ կուսակցութեան առաջին գործը պէտք է ըլլայ Հայ Յեղ. Ինչակցութեան հետ բանակցել՝ մակ մարմին մը կազմելու, կամ գոնէ մշտական գործունէութեան համաձայն ծրագիր մը մշակելու համար: Ժամանակը յարմար է առաւել քան երբեք այսպիսի ձեռնարկի մը յաջողման համար: Գոհութեամբ կը նկատեմ որ յեղափոխական օրկաններու մէջ կուսակցական կլորները գաղթած են ատենէ մը ի վեր. ժողովուրդը ջերմօրէն կը բաղձայ այդպիսի միութեան մը փութացումը, Ռուսոսքի մէջ խումբ մը Հայեր, Հայ Յեղափոխական միութեան յանձնաժողով անուսով մարմին մը կազմել են, որ սրտաչարժ շրջաբերական մը ուղղած է մամուլին՝ ծանուցանելով իր նպատակը որ է ջանալ մերձեցնելու եւ միացնելու հայ յեղափոխական կուսակցութիւնները. այդ մարմնին ջանքը արժանի է ամէն դովեստի, բայց ես կը կարծեմ թէ յեղափոխական մարմինները ասելի զիւրաւ կը միանան՝ եթէ իրենց գլուխը գտնուող անձերը անկեղծօրէն եւ հզօրապէս գանկան այդ բանն ընել եւ իրենք իրենց ձեռքովը կատարեն դայն, առանց սպասելու միջնորդներու, որոնք երբեմն կրնան՝ հակառակ ամէն բարի կամեցողութեան նորանոր կնճոտութիւններ յարուցանել եւ յապաղեցնել գործին յաջողումը: Եւ երբ այդ յեղափոխական մարմինները միանան, շատ մը չարիքներ

ինքնին պիտի բարձուին, — օրինակի համար պիտի չկրկնուին այլեւս քստմնելի գայթակղութիւններ ինչպէս Սալմաստի հրէշներուն շահատակութիւնները որոնց մասին ամբողջ հայ մամուլը յայտնեց շատ բնական զայրոյթ մը, եւ պիտի չկրկնուի նաեւ այն տխուր եւ րեւոյթը երկու կուսակցութիւններու որ փոխադարձաբար իրարու վրայ կը նետեն այդ ուժերներու պատասխանատուութիւնը : Այդ միացումը պիտի տայ ըրական ուժ մը, հեղինակութիւն մը յեղափոխական մարմինին, որուն մասին ա՛լ ինքնին պիտի դադրին քննադատութիւնները, — որոնց ոմանք՝ պէտք է ընդունիլ՝ բացարձակապէս ճիշդ եւ անհրաժեշտ էին, — յնչափ ճիշդ եւ այնչափ անհրաժեշտ որ օգտակար եղան յեղափոխական շարժումին՝ զայն առաջնորդելով զէպ ի կատարելագոյն փուլ մը, եւ որովհետեւ վերջապէս՝ յեղափոխական գործունէութեան ճշմարիտ խոչընդոտը պէտք է փնտոել ոչ թէ անոր մասին յայտնուած քննադատութիւններուն մէջ (առողջ մարմին մը տեղի չի տար արդար քննադատութեան, իսկ եթէ անարդարօրէն քննադատուի՝ ոեւէ մասնիկ մը չի կորսնցնէր ատոր համար իր ուժէն), այլ նոյն իսկ յեղափոխական սարբին ներքին վերքերուն մէջ, որոնց գոյութիւնը կարգ մը անկեղծ յեղափոխականներ իրենք առաջինն են եղած խոստովանող :

«ԴՐՕՇԱԿ»Ը ԵՒ ՀԱՅ-ԻՐԴԱԿԱՆ ՀԱՐՃԸ. — «Իրօչակոյն իր վերջին երկու թիւերուն մէջ հրատարակած է «Քիւրտիսթան» թերթի խրմ

բաղիր Ապտիւրրահման Պէյ Պետրիսանի կողմէ Քիւրտերուն ուղղուած մէկ շատ զեղեցիկ կոչին առթիւ, Հայ-քրդական հարցին վրայ բնագործակ յօդուած մը զոր պարտք կը համարիմ մատնանիչ ընել «Անահիտ» ընթերցողներուն իբրեւ յօդուած մը որուն մէջ ըսուած է գրեթէ ամէն ինչ որ կայ ըսելու այդ խնդրոյն մասին : Ես շատ ուրախ եմ տեսնելով որ Հայ Յեղ. Դաշնակցութիւնը այդքան լըջօրէն կը սկսի զբաղիլ այդ շատ կարեւոր խնդրով :
Ա. Չ.

Յ. Գ. — Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը վեց պետութեանց արտաքին գործոց նախարարներուն եւ Պոլսոյ դեսպաններուն ուղղած է նօթ մը, անոնց ուշադրութիւնն հրաւիրելով Սասնոյ վրայ զոր թիւրք կառավարութիւնը զինուորներով ու Քիւրդերով պաշարած է՝ բռնադատելու համար լիոնսկաններն իրենց բռնավայրը թողլով դաշտը իջնելու. նօթը կը բողոքէ այս ապօրինի որոշման դէմ, որ նպատակ ունի քնաջինջ ընել Սասունը, եւ մատնանիչ կ'ընէ ան պարտականութիւնը զոր ունի Եւրոպան կորուստէ ազատելու այդ դժբաղդ քաջերու բոյնը, որուն անդամ մը օգնութեան հասնելէ յետոյ զայն բոլորովին լքանելը վատութիւն մը պիտի ըլլար Եւրոպային կողմէ :

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ի

Դէմքեր, Կոմիտաս վարդապետը՝ Արշակ Չօպանեան . — Հայգիրք, Լուսնին օրհասը՝ Վահրամ Սվաճեան . — Արուեստի էջեր, Յունական արձանագործութիւնը՝ Իբրուէթ Թէն . — Էռնէսթ Ուրնան՝ Պերթլլօ . — Պատուոյ ատեանը՝ Ա. Չ. . — Հայ էջեր, Տաղ ողբերական՝ Անտոն Ղպիր . — Աղգային քրոնիկ : — Գրքեր եւ թերթեր, Տոբթոր Գօլօղեան եւ «Իսթերի»ն, «Մշակ»ի քրոնիկագիրը, Վերջին բառ մը Պ. Հախումեանին, Բեւեռագէտի մը հոգին, «Նոր Կեանք», «Իրօշակ» եւ հայ-քրդական խնդիրը, Սասունի խնդիրը՝ Ա. Չ. :

Պ. Բժիշկ Ա. Շխեան (Թիֆլիս) նուիրեց մէկ տարեկան «Անահիտ»՝ Հաւլարարի էփանագին գրադարանին :

ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԵՑՄԱԻ

ՄԵՏԵՆԱՊԱՐԱՆ «ԱՆԱՀԻՏ» . — ԹԻԻ 1

ԱՆԱԹՈՂ ՅՐԱՆՍ

ԵՊԻԿՈՒՐԻ ՊԱՐՏԵԶԸ

(Հ Մ Տ Ո Ւ Ա Ծ Ն Ե Ր)

Հեղինակին կենդանագրովը

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Ա. Չ.



ԳԻՉ ՈՐԷՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄԷ

ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ «ԱՆԱՀԻՏ» . — ԹԻԻ 2

ԱԼՖՐԵՏ ՏՐ ՎԻՆԵՐ

ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

Հեղինակին կենդանագրովը

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Ա. Չ.

Այս գրքոյիը ղրկուեցաւ ԱնԱՀԻՏի բաժանորդներէն անոնց որ երրորդ տարուան բաժնեգինը վճարած են . ԱնԱՀԻՏին բաժանորդ չեղողներ կրնան զայն ընդունել՝ մէկ ֆրանք ղրկելով :

Այն բաժանորդները որ պիտի փութան վճարել իրենց անվճար մնացած բաժնեգները, պիտի ընդունին այս գրքոյիը՝ ձրիաբար :

Պիտի պարունակէ Ֆրանսայի մեծագոյն բանաստեղծներէն մէկուն, ԱԼՖՐԵՏ ՏՐ ՎԻՆԵՐԻ ամենէն ղեղեցիկ քերթուածներուն թարգմանութիւնը : Այդ գրքոյին ալ պիտի ղրկուի՝ ձրիաբար՝ միմիայն ԱնԱՀԻՏի այն բաժանորդներուն որ երրորդ տարուան բաժնեգինը վճարած են :

ԱՆՍԷՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ան ահիջ 4ը հրատարակուի ամիսը անգամ մը :
 Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ),
 Չտուար (Ամերիկա), 5 բուլլի (Ռուսիա). վեցամսեայ՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիր-
 ներ), տուար 1 (Ամերիկա), 3 բուլլի Ռուսիա :
 ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է :
 Ձեռագիրները հոս չեն դարձուիր :
 Կ'ընդունուին ազգեր :
 Նամակ, յօդուած եւ բաժանորդագիրն զրկել հետեւեալ հասցէին

A. TCHOBANIAN
 17. RUE LA BRUYERE
 PARIS

«ԱՆՍԷՍ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Թիֆլիս	Պարոն	Գէորգ Մելիք-Կարապետեան
Պաքու. —	»	Ս. Մ. Մոցիկեան
Ռուսճուք. —	»	Նշան Ս. Թորոսեան
Ֆիլիպէ. —	»	Ա. Տեմիրճիպաչեան
Պուքրէշ. —	»	Արիս Լազար
Դաւրէժ. —	»	Տր. Կ. Փաշայեան
Նիւ-Նորք. —	»	Կատարեան
Բրովիտէնս. —	»	Նազարէթ Թաթէոսեան
Ֆրեզնո. —	»	Աւագ Կարապետեան
Իսթ Ուոթըրթաուն. —	»	Մանուկ Դալստեան
Ուսթըր. —	»	Երուանդ Յակոբեան
Չիքազո. —		Ա. Քարակալուրեան
Պոսթոն. —		Կ. Յ. Քարակիւրեան